# Ազգ
Azg

15 ՄԱՐՏ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 46(4898)

ISSN: 1829-1651
9 771829 165003 12046


## Իրանի խորհրդարանում հարցաքննել են Ահմադինեժադին

**Իրանի խորհրդարանում մարտի 14-ին սկսվել է երկրի նախագահի Մահմուդ Ահմադինեժադի հարցաքննությունը, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Գերպահպանողական պատգամավորները Ահմադինեժադին մեղադրում են երկրի տնտեսության քայքայման մեջ: Խոսքը մասնավորապես Թեհրանի մետրոյի շինարարությունը թերի ֆինանսավորելու, տնտեսական անբավարար աճի եւ սոցիալական նպաստների համակարգի անհաջող բարեփոխման մասին է:**

**Ահմադինեժադին մեղադրում են նաեւ նախարարների անօրինական նշանակումների եւ հեռացումների մեջ: Ըստ որում մի շարք դեպքերում նա կադրային որոշումներն ընդունել է Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի կարծիքին հակառակ: Վերջապես նախագահին կշտամբում են այն բանի համար, որ նա կողմնակից է «իրանական գաղափարախոսությանը»՝ համաիսլամական ավանդույթներին հետեւելու փոխարեն: Այդ մասին հաղորդում է Tehran Times թերթը:**

**Իրանի սահմանադրության համաձայն, խորհրդարանում նախագահին հարցաքննության կանչելու համար անհրաժեշտ են 290 պատգամավորներից առնվազն 73-ի ստորագրությունները: Ահմադինեժադի ընդդիմախոսները ստացել են 79 պատգամավորի ստորագրություն: 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո Ահմադինեժադը երկրի առաջին նախագահն է, որին հարցաքննում են խորհրդարանում: Հարցաքննությունը հեռարձակվում է պետական ռադիոյի ուղիղ եթերում:**

**Վերջերս Ահմադինեժադի եւ այաթոլլահ Խամենեիի դիմակայությունը խորացել է: Մարտի սկզբներին կղերականները հաղթեցին Իրանի խորհրդարանական ընտրություններում, ինչը հարված հասցրեց Ահմադինեժադի դիրքերին: 2013-ին Իրանում անցկացվելու են նախագահական ընտրություններ: Ահմադինեժադը չի կարողանա դրանց մասնակցել, քանի որ, սահմանադրության համաձայն, իրավունք չունի առաջադրվել 3-րդ անգամ:**

## Առաջադրումներ մեծամասնականով, եւ ոչ միայն



Երեկ համամասնական կարգով առաջադրումներ էլի չեն եղել, իսկ մեծամասնականով ընտրատարածքային հանձնաժողովներ փաստաթղթեր ներկայացնողների թիվն ավելացել է. Նոր Նորքի թիվ 2 ընտրատարածքում առաջադրվել է ՀՀԿ-ական, «Առաջին լրատվական» հեռուստածրագրի տնօրեն **Սամվել Ֆարմանյանը**, Քանաքեռ-Զեյթունի թիվ 3 ընտրատարածքում փաստաթղթեր են ներկայացրել Ազգային ժողովի ԲՀԿ-ական պատգամավոր **Աշոտ Տոնոյանը** («Տոնուս» ընկերության սեփականատեր) եւ ՀՀԿ-ական **Արտակ Ստեփանյանը** («Քեթրին գրուպ» ընկերության սեփականատեր): Թիվ 10 ընտրատարածքում մեծամասնական կարգով առաջադրվելու փաստաթղթեր է ներկայացրել «Նուշիկյան» ասոցիացիայի նախագահ, տնտեսական գիտությունների թեկնածու **Գարեգին Նուշիկյանը** (նա, փաստորեն, մրցակցելու է Խաչատուր Սուքիասյանի հետ), Արաբկիրի թիվ 4-ում՝ SAS սուպերմարկետների ցանցի սեփականատեր **Արտակ Սարգսյանը** ՀՀԿ-ի աջակցությամբ, Դավիթաշենի թիվ 5-ում՝ ներկայիս թաղապետ **Արթուր Գեւորգյանը**, Աջափնյակի թիվ 6-ում՝ թաղապետ **Ռուբեն Հովսեփյանը**՝ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի եղբայրը, թիվ 9-ում՝ ՀՀԿ-ական պատգամավոր **Ռուբեն Սադոյանը**, Էրեբունու թիվ 13-ում՝ նախկին թաղապետ **Միեր Սեդրակյանը**, թիվ 14-ում ԲՀԿ-ական **Բագրատ Առաքելյանը**, թիվ 16-ում՝ ԲՀԿ ԱԺ պատգամավոր **Տիգրան Ստեփանյանը**, թիվ 18-ում՝ ՀՅԴ-ական պատգամավոր **Արայիկ Գրիգորյանը** եւ անկուսակցական Ռազմիկ Թեւոնյանը, թիվ 20-ում ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր **Հրանտ Գրիգորյանը**:

Համամասնական ցուցակների մասին քաղաքական ուժերը դեռ դժվարանում են հստակ որեւէ բան ասել: Կան զանազան ենթադրություններ ու ոչ պաշտոնական հրապարակումներ:

Վաղը տեղի կունենա «Ազատ դեմոկրատներ» կուսակցության համագումարը, որտեղ գուցե հասկանալի կլինի՝ «Ժառանգություն»-«Ազատ դեմոկրատներ» միասնական ցուցակ լինելո՞ւ է, թե՞ ոչ: ՀԱԿ-ի ցուցակի վերաբերյալ առայժմ ոչ պաշտոնական տեղեկություն կա, թե առաջին հորիզոնականներն այս տեսքի են. **Լեւոն Տեր-Պետրոսյան, Ստեփան Դեմիրճյան** (ՀԺԿ), **Արամ Զավենի Սարգսյան** («Հանրապետություն»), **Արամ Մանուկյան** (ՀՀՇ), **Լեւոն Զուրաբյան**, **Լյուդմիլա Սարգսյան** (ՍԴՀԿ), **Նիկոլ Փաշինյան, Հրանտ Բագրատյան, Գագիկ Ջհանգիրյան, Խաչատուր Սուքիասյան, Մանուշակ Պետրոսյան, Դավիթ Շահնազարյան, Պետրոս Մակեյան** (ԺՀԿ), **Հովհաննես Հովհաննիսյան** (ՀԼԿ) եւ **Դավիթ Մաթեւոսյան**: Պաշտոնապես, սակայն, ՀԱԿ-ականներն ասում են, թե իրենց ցուցակը դեռ պատրաստ չէ:

Եվ մի նորություն: Երեկ հայտնի դարձավ, որ ՀՀԿ-ին անդամագրվելու դիմումներ են ներկայացրել ԱԺ անկախ պատգամավոր **Վիկտոր Դալլաքյանը**, նախարարներ **Հրայր Թովմասյանն** ու Վաչե **Գաբրիելյանը:**

Ս. Խ.

## Ի՞նչն է փոխվելու ԱՊՊԱ-ի օրենքում

**Հայաստանի ոստիկանությունն այսօր կառավարության հաստատմանը կներկայացնի օրենսդրական փոփոխությունների առաջարկներ, որոնք կոչված են պարզեցնելու տրանսպորտային միջոցների պետական գրանցման եւ հաշվառման ընթացակարգը:**

**Ներկայումս, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքի համաձայն, արգելվում է առանց ԱՊՊԱ պայմանագրի եւ գործող ԱՊՊԱ կտրոն ներկայացնելու ավտոտրանսպորտային միջոցների պետական հաշվառում անցկացնելը կամ ավտոտրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի գրանցում իրականացնելը: Հետեւաբար, տրանսպորտային միջոցի պետական հաշվառում կամ գրանցում իրականացնելիս, ԱՊՊԱ պայմանագրի ստուգման եւ դրա բացակայության դեպքում վարչական պատասխանատվություն է սահմանված: Այդ գործընթացը պահանջում է բավականին ժամանակ, որն էականորեն ազդում է տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող ստորաբաժանումների ծառայությունների որակի վրա՝ վերջիններիս ծանրաբեռնելով ավելորդ պարտականություններով, իսկ քաղաքացիների համար առաջացնելով զգալի բարդություններ:**

**«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքի առաջարկվող փոփոխությամբ, սահմանվում են այնպիսի դրույթներ, որոնք թույլ կտան վերը նշված ոլորտի իրավախախտումները հայտնաբերել տեղեկատվական համակարգի միջոցով, այլ ոչ տրանսպորտային միջոցի պետական հաշվառման կամ գրանցման ժամանակ:**

**Տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կամ գրանցման ժամանակ ոչ թե իրականացվելու է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթ, այլ ԱՊՊԱ պայմանագիր չունենալու դեպքում մերժվելու են հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից իրականացվող գործողությունները: Իսկ նշված ոլորտում իրավախախտումները հայտնաբերվելու են տեղեկատվական համակարգի միջոցով, այլ ոչ հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից:**

**Նախագծերի ընդունմամբ տրանսպորտային միջոցի պետական գրանցման եւ հաշվառման կարգի պարզեցումից բացի, ակնկալվում է, որ կպաշտպանվեն քաղաքացիների իրավունքները՝ նրանց ձերբազատելով լրացուցիչ խնդիրներից:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Գերմանիայի ԱԳ նախարարը կժամանի Երեւան

Մարտի 16-ին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով Հայաստան կայցելի Գերմանիայի Դաշնային Հանրապետության ԱԳ նախարար Գվիդո Վեսթերվելլեն: Ըստ ԱԳՆ հաղորդագրության, այցի ընթացքում նախատեսված են Գվիդո Վեսթերվելլեի հանդիպումները Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:



Գվիդո Վեսթերվելլեն կայցելի նաեւ Ծիծեռնակաբերդ եւ ծաղկեպսակ կդնի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Մինչ Երեւան այցելությունը, մարտի 14-15-ին Գերմանիայի արտաքին գերատեսչության ղեկավարը, ըստ ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների, պաշտոնական այցով կլինի Բաքվում, կհանդիպի Ադրբեջանի նախագահի եւ ԱԳ նախարարի, ինչպես նաեւ Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR) ղեկավարի հետ:

Գերմանացի դիվանագետը այսօր՝ մարտի 15-ին հանդիպումներ կունենա նաեւ Թբիլիսիում, որից հետո միայն իր տարածաշրջանային այցելությունը կավարտի Երեւանում: **Ա. Հ.**

## «Սիթի պետրոլ գրուպը» տուգանվեց 100 միլիոն դրամ

### *Գերիշխող դիրքի չարաշահման եւ փոքր բենզալցակայանների սնանկացման քաղաքականության համար*




Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը երեկ բենզինի եւ դիզելային վառելիքի շուկաներում գերիշխող դիրքի չարաշահման համար «Սիթի պետրոլ գրուպ» (CPS) ընկերությանը տուգանեց 100 մլն դրամով: Ընկերությունը, զբաղեցնելով վերոնշյալ շուկաների մոտ կեսը, փորձել է շուկայից դուրս մղել եւ սնանկացնել համեմատաբար փոքր բենզալցակայանների սեփականատերերին: Մասնավորապես, նրա վարած գնային քաղաքականությամբ, փոքր բենզալցակայանները սնանկանում են, եւ դրանց սեփականատերերը ստիպված իրենց բիզնեսը ոչ շահավետ պայմաններով վաճառում են «Սիթի պետրոլ գրուպին»:

Ըստ հանձնաժողովի ուսումնասիրությունների, «Սիթի պետրոլ գրուպը» մեծածախ բազաներից վառելիքը իրացնում է այն գնով, ինչ գնով վաճառում է իրեն պատկանող տասնյակ բենզալցակայաններում: Բացահայտվել են տասնյակ դեպքեր, երբ այս ընկերության քաղաքականության հետեւանքով փոքր բենզալցակայանների տերերը ստիպված իրենց բիզնեսը վաճառել են վերջինիս կամ նրա հետ կնքել համատեղ օգտագործման պայմանագիր՝ ոչ շահավետ պայմաններով: Ըստ այդ պայմանագրերի, շահույթի 98 տոկոսը տնօրինում է «Սիթի պետրոլ գրուպը», իսկ մնացած ընդամենը 2 տոկոսը՝ տվյալ բենզալցակայանի իրական սեփականատերը:

Վարույթի ընթացքում ընկերության կողմից ներկայացվել են պատճառաբանություններ, որոնք հանձնաժողովն անհիմն է համարել եւ եզրակացրել, որ «Սիթի պետրոլ գրուպը» միտումնավոր եւ նպատակաուղղված գործունեություն է ծավալել՝ուղղված այլ տնտեսվարողներին պատկանող բիզնեսի ոչնչացմանը եւ սեփական բիզնեսի խոշորացմանը: Հանձնաժողովի որոշմամբ, ընկերությունը, բացի տուգանվելուց, եռօրյա ժամկետում պարտավոր է նաեւ վերացնել խախտումն ամբողջությամբ եւ աշխատել արդար մրցակցային կանոններով:

Ա. Մ.

# Ակտիվիստները հույս ունեն, որ այսօր վարչապետը կանդրադառնա Մաշտոցի այգու խնդրին

*Պայթյունավտանգ վիճակ ոստիկանների եւ բողոքավորների միջեւ*



Մաշտոցի այգու համար արդեն մեկ ամիս կռիվ տվող ակտիվիստները քաղաքացիական նախաձեռնությունների ու բնապահպանների երեկ նամակով դիմել են վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ պահանջելով այսօր կայանալիք կառավարության նիստի օրակարգից հանել «Երեւանի քաղաքապետին լիազորություն վերապահելու մասին» որոշման նախագծի 3-րդ կետը, որով Մաշտոցի այգու կրպակները կապամոնտաժվեն եռամյա ժամկետում: «Արդեն մեկ ամսից ավելի է, ինչ շարունակվում է Երեւանի Գլխավոր պողոտայի Մաշտոց-Կողբացի հատվածի հանրային կանաչ տարածքի սեփականության պաշտպանության մեր քաղաքացիական պայքարը: Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը շարունակում է մեր հարցադրումներին եւ պահանջներին տալ ոչ լիարժեք, միեւնույն ժամանակ իրարամերժ պատասխաններ: Կրկին շեշտում ենք, որ վերը նշված տաղավարների/կրպակների կառուցումն ու տեղադրումն ապօրինի է եւ հակասում է Երեւանի գլխավոր հատակագծին», գրված է վարչապետին ուղղված հաղորդագրությունում:

Ակտիվիստները ներկայացրել են օրենքի խախտման մի շարք կետեր, որոնք թույլ է տվել քաղաքապետարանը Աբովյան փողոցից պատմամշակութային կրպակները այգում տեղադրելիս:

Այսօր ժամը 13-ին Ուսանողական այգու մոտից կմեկնարկի նաեւ ինքնորոշված քաղաքացիների երթը ի փրկություն Մաշտոցի այգու: Երթը կընթանա Օղակաձեւ զբոսայգով, Հյուսիսային պողոտայով, օպերայի տարածքով եւ կավարտվի Մաշտոցի պուրակում: «Տարիներ շարունակ քաղաքային եւ պետական իշխանություններից հանրային տարածքները խլվել են ու շարունակվում են օտարվել՝ ի շահ մասնավորի: «Մաշտոցի այգու մեկամսյա պայքարով հանրությունը ցույց է տալիս, որ գիտակից է իր իրավունքներին, տեր է կանգնում իր հանրային ունեցվածքին եւ պատրաստ է պահպանել ու ազատագրել հանրային ունեցվածքը մասնավոր բիզնեսից: Սա է մեր գերակա հանրային շահը», ասված է հաղորդագրությունում:

Հիշեցնենք, որ ակտիվիստները շուրջօրյա հերթապահություն են սկսել այգում: Նրանք մինչեւ ուրբաթ ժամանակ են տվել քաղաքապետին՝ ապամոնտաժելու կրպակները, հակառակ պարագայում պայքարի քաղաքակիրթ ձեւը կփոխվի, եւ ակտիվիստները սեփական ուժերով այգին «կազատագրեն» կրպակներից: Մաշտոցի պուրակի հարցն արդեն գտնվում է դատարանում: Բնապահպան ակտիվիստները նաեւ ստորագրահավաք են կազմակերպել, որին մասնակցել է մի քանի հազար մարդ: Նրանց զորակցություն են հայտնել բազմաթիվ արվեստագետներ, դերասաններ, երգիչներ:

Երեկ գիշեր ժամը 9-ի մոտակայքում Մաշտոցի այգում կրքերը բորբոքվեցին ծայր աստիճան, երբ շուրջ 100 ոստիկաններ քաշքշելով քանդեցին ցուցարարների լարած վրանը, որն այդ պահին լեցուն էր քնած եւ արթուն բողոքավորներով: Սկսվեց քաշքշոց, իրարանցում, բազմապատկվեց ոստիկանների քանակը, նրանց տեսքը դարձավ առավել սպառնալից եւ ագրեսիվ: Մոտակա շենքերից եկած բնակիչների հաշվին շատացավ նաեւ ցուցարարների թիվը, որոնք միահամուռ վանկարկում էին՝ «ամոթ, ամոթ»:

Ավելի ուշ, ժամը 23:30-ին մոտ, տարածվեց ոստիկանության հայտարարությունը, որ վրանների տեղադրումը..հասարակական վայրերում խստիվ արգելված է եւ, որ իրենք ժամը 21:30-ի սահմաններում ստիպված են եղել «ապամոնտաժել» վրանը:

Այդ պահին այգում արդեն պայթյունավտանգ իրավիճակ էր:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ռուս-վրացական «կոշտացումը», Ջավախքը՝ ընդդեմ թուրքական էքսպանսիայի

**Հարեւան Վրաստանում թուրքական գործոնը թեեւ ապտաքին է, բայց կարող է որոշ ժամանակ անց ազդեցություն ունենալ հարեւան երկրի հատկապես ժողովրդագրության վրա, եւ այդ առումով վրացական իշխանություններն ունեն ընկալում, որ ջավախահայությունը թուրքական էքսպանսիայի դեմ իրենց դաշնակիցն է: «Տեսակետ» ակումբում երեկ հյուրընկալված քաղաքագետ Սերգեյ Մինասյանի այս մոտեցումը չի հակասում նաեւ այն փաստին, որ Վրաստանում հայկական գործոնը խնդիրների հետ է կապված՝ ինչպես պատմական համատեքստում, այնպես էլ հատկապես աբխազական պատերազմի ժամանակ հայերի բռնած դիրքորոշման առումով:**

**Վերջին շրջանում էլ, հատկապես Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու ԱՄՆ այցելության ժամանակ հայկական կազմակերպությունների հետ հանդիպումների արդյունքում, ըստ Մինասյանի, փոխվում է մոտեցումը Ջավախքի նկատմամբ՝ հաշվի առնելով ամերիկյան որոշ շրջանակների հետաքրքրվածությունն այս տարածաշրջանով, եւ այս ամենը՝ Վրաստանի ԵՄ եւ ԱՄՆ կողմնորոշման ֆոնին:**

**«Ազգը» քաղաքագետից հետաքրքրվեց, թե ինչպիսին կարող է լինել ռուս-վրացական հարաբերությունների հետագան, երբ երկու կողմից էլ թեեւ հնչում են հարաբերությունները նորմալացնելու ցանկության մասին հայտարարություններ, սակայն առաջ են քաշվում նաեւ պայմաններ: Մինասյանի արձագանքի համաձայն, արդեն մայիսին Ռուսաստանում նախագահի պաշտոնին վերադարձող Վլադիմիր Պուտինը կարծես վրացական հարցում առավել կոշտ դիրքորոշում է դրսեւորելու:**

**Իսկ 2012-2013 թթ. Վրաստանում տեղի ունենալիք ընտրությունների արդյունքներով ներկայիս նախագահ Սաակաշվիլու՝ նախագահ լինել-չլինելու հարցում հստակություն լինելու դեպքում հնարավոր է, որ Ռուսաստան-Վրաստան հարաբերությունների նորմալացման ճանապարհ բացվի, սակայն դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին դեռ շատ վաղ է խոսել: Մինասյանի պարզաբանմամբ, Վրաստանի՝ Աբխազիայի ու Հարավային Օսիայի ճանաչման որոշումը հետ կանչելու, իսկ Ռուսաստանի՝ այդ տարածքները որպես անկախ փաստացի ընդունելու պահանջները դիմացինին չեն կարող բավարարություն տալ: Այդուհանդերձ, 2013-ին Մինասյանն ինչ-որ առաջընթացի հույս ունի՝ հաշվի առնելով ինչպես ընտրությունները, այնպես էլ 2008-ի օգոստոսյան հարավօսական պատերազմի թողած դասերը:**

**Տարածաշրջանային թեմաների առնչությամբ պատասխանելով Իսրայել-Ադրբեջան 1.6 մլրդ դոլարի սպառազինության պայմանագրի մասին հարցին՝ Սերգեյ Մինասյանը համոզմունք հայտնեց, որ հակահրթիռային պաշտպանության եւ ձեռքբերվելիք նմանատիպ այլ զինատեսակները ավելի շուտ ուղղված են Իրանի դեմ, քան Լեռնային Ղարաբաղի, թեեւ Ադրբեջանը փորձում է բնավ էլ ոչ միամիտ իրանցիներին համոզել, թե այդ ամենը Արցախի դեմ է ուղղված: Մինասյանի բացատրությամբ, այդ գործարքի հիմնական իմաստն այն է, որ Իրանի շուրջը ինչ-որ իրադարձությունների դեպքում վտանգ չլինի Ադրբեջանի նավթագազային ենթակառուցվածքներին:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Թալեաթ փաշայի թղթապանակը»՝ Տորոնտոյում

Արա Սարաֆյանի կազմած «Թալեաթ փաշայի թղթապանակը» աշխատությունը մարտի 17-ին կներկայացվի Տորոնտոյում՝ Հայկական երիտասարդական կենտրոնի Համազգային թատրոնում: «**Ազգն**» արդեն տեղեկացրել է ինչպես աշխատության, այնպես էլ տարբեր լեզուներով Թալեաթի մասնավոր, անձնական թղթերի բովանդակությանը ծանոթանալու այս հնարավորության մասին:

Հիշեցնենք, որ թուրքական արխիվների վերջերս գաղտնազերծված փաստաթղթերը ու Թալեաթ փաշայի անձնական թղթերից մնացած նյութերը, աշխատության ապացուցմամբ, վկայում են, որ Թալեաթը «Հայոց ցեղասպանության ճարտարապետն էր»: Կան հստակ արձանագրություններ, որոնց համաձայն հենց Թալեաթն է հրահանգել, ապա նաեւ վերահսկել Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանումը 1915-16-ին:

Թալեաթ փաշայի թղթապանակը օսմանյան պաշտոնական ամենահարազատ տեսակետն է, որ կա Հայոց ցեղասպանության մասին: Թղթապանակը հատստապես իր ժամանակին պատրաստվել է ներքին գործերի նախարարի համար՝ մասնավոր օգտագործման նպատակով: Եվ այդ թղթապանակը թերեւս հասել է մեր օրեր, քանի որ 1921-ին սպանվեց Թալեաթը, եւ նրա այրին թղթապանակը հանձնել է մի թուրք պատմաբանի, վերջինս էլ հրապարակել է:

Ա. Հ.

# Դեմկուսը գնում է «յուրօրինակ» ցուցակով եւ «այլընտրանքային» ծրագրով



**Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը գալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցելու է համամասնական ընտրակարգով, ինքնուրույն եւ «յուրօրինակ ձեւաչափով»: Երեկ լրագրողների հետ հանդիպմանը այսպես հայտարարեց կուսակցության նախագահ Արամ Գասպարի Սարգսյանը: «Մեր համամասնական ցուցակում, կուսակցականներից բացի, լինելու են գիտնականներ, մտավորականներ, արվեստի գործիչներ, մանկավարժներ, որոնք հայտնի անուններ են հասարակության համար», ասաց Սարգսյանը՝ հավելելով, որ Դեմկուսը գաղափարային քաղաքական ուժ է, եւ իրենք պայքարում են հենց երկրում գաղարական երկխոսության, պայքարի ավանդույթների հիմնադրման համար:**

**Կուսակցության ծրագիրն էլ, ըստ Սարգսյանի, լինելու է «այլընտրանքային». «Մենք առաջարկում ենք ամբողջովին փոխել գործող համակարգը, առաջարկում ենք սահմանադրության փոփոխություն մշակել եւ ընդունել, ըստ որի սահմանադրությունը կսահմանի, որ ՀՀ-ն ոչ թե «ուղղակի» սոցիալական պետություն է, այլ որ ՀՀ-ն սոցիալական պատասխանատվություն ունի իր քաղաքացիների բարեկեցությունն ապահովելու համար», ասաց Արամ Սարգսյանը: Արտաքին քաղաքականության առնչությամբ ՀԴԿ նախագահը, ընդգծելով, որ իրենք «ընդհանուր առմամբ գոհ են նախագահի վարած արտաքին քաղաքականությունից», այդուհանդերձ նկատեց. «Մենք կարծում ենք, որ մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ պետք է լինեն այնքան, որքան հնարավոր է որ լինեն, իսկ այլ երկրների հետ այնքան, որքանով չեն խանգարի Ռուսաստանի հետ մեր հարաբերություններին»:**

**Ինչ վերաբերում է ՀԴԿ շանսերին՝ անցնելու Ազգային ժողով, ապա կուսակցության ղեկավարը գտնում է, որ իրենք «շեմը կհաղթահարեն»: Առհասարակ գալիք խորհրդարանի վերաբերյալ Արամ Սարգսյանը նկատեց. «Ես կանխատեսում եմ, որ կոալիցիոն ձեւաչափի փոփոխություններ կլինեն»:**

Հ. Ա.

# Վահագն Տատրյանը՝ Դեր Զորի կառավարիչ Զեքի Բեյի մասին

Հնուս ցեղասպանագետ եւ Կանադայի Զորյան ինստիտուտի ուսումնասիրությունների բաժնի տնօրեն պրոֆ. **Վահագն Տատրյանը**, ըստ ստացված հաղորդագրության, ապրիլի 1-ին Կալիֆոռնիայի Արարատ-Էսքիճյան թանգարանում դասախոսություն է կարդալու Դեր Զորի կառավարիչ Զեքի Բեյի մասին, որը եղել է հայերի ցեղասպանության «երկրորդ փուլի» գլխավոր պատասխանատուն: Դասախոսությունը, որը նվիրված է լինելու Լութեր եւ Աննա Էսքիճյաններին, հովանավորվելու է թանգարանի եւ ՆԱԱՍՐ-ի (Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի) կողմից: Դասախոսությանը հաջորդելու են երաժշտական («Անի» լարային քառյակի կատարմամբ) ու գրքի շնորհանդես-ստորագրություն բաժինները:

Զաքի Բեյ անունով ճանաչված Սալիհ Զեքին ծնվել է, ըստ հաղորդագրության, 1879-ին Սամսունում: Վաղ 1900-ականներին օսմանյան քաղաքացիական ծառայության մեջ է մտել եւ գնալով աստիճանի բարձրացում է ստացել, դառնալով կայմակամ՝ այսինքն՝ կառավարիչ նախ Տիրեբոլու (1906), ապա Վաքֆիքեբիր (1909), Ունյե (1910), Բաֆրա (1911), Ալաշեհիր (1912), Ինջեսու (1914) եւ Դեվելի (1915) քաղաքների: Քայսերիի (Կեսարիա) մոտ ծառայելով՝ նա խիստ դաժան անձնավորության համբավ է վաստակել: 1916-ին նշանակվել է Դեր Զորի մութասարըֆ՝ փոքր տարածքի կառավարիչ, եւ հանձն է առել տարածաշրջանի հայերին բնաջնջելու պարտականությունը, որն իր նախորդը՝ Ալի Սուաս Բեյը հրաժարվել էր ի կատար ածել:

Առավել մանրամասնությունների համար այցելել «**ararat-eskijian-museum@netzero.net**» կամ «**hq@naasr.org**» կայքերը:

Հ. Ծ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Խաչատուր Սուքիասյանը ոչ մեկի մրցակցությունից չի վախենում



Գաղտնիք չէ, որ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը հանրության մեջ առավել դրական ընկալում ունի, քան այն քաղաքական ուժը, որին հարում է նա: Խոսքը Հայ ազգային կոնգրեսի մասին է: Այնուամենայնիվ՝ Սուքիասյանը շարունակում է այդ ուժին հարել, նրա վերաբերյալ դրական գնահատականներ հնչեցնել, քանի որ դա համարում է իր թիմը, որի հետ խորհրդարանում լինելու մտադրություն ունի: Սուքիասյանն իր փաստաթղթերը ներկայացրել է թիվ 10 ԸԸՀ՝ մեծամասնական կարգով մայիսի 6-ի ընտրություններին մասնակցելու համար: Հիշեցնենք, որ 2009 թվականին նա վայր դրեց պատգամավորական մանդատը՝ համարելով, որ իր համախոհի ուժի՝ խորհրդարանում չլինելու պարագայում եւ այն ժամանակվա մթնոլորտում (2008 թվականի մարտի 1-ի դեպքերից հետո) ինքը միայնակ որեւէ բան անել չէր կարող: Բնականաբար ծագեց հարցը՝ այդ դեպքում ինչո՞ւ վերստին պատգամավոր դառնալ, ի՞նչ է փոխվել: Ըստ Սուքիասյանի ՝ այժմ մթնոլորտի փոփոխություն տեղի է ունեցել. «Նկատի ունեմ, որ ՀԱԿ-ն այսօր կարող է մտնել խորհրդարան եւ լուրջ հակակշիռ դառնալ իշխանության համար»:

Այնպես որ ապագա խորհրդարանում ՀԱԿ-ի հետ թիմային աշխատանքում է տեսնում Սուքիասյանն ինքն իրեն: Եվ ոչ միայն ՀԱԿ-ի, նա անցյալում տեւականորեն, մոտ 10 տարի պատգամավոր է եղել, աշխատել շատերի հետ եւ ընկերներ հետ գցել՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից. «Պետք է շարունակել տնտեսական քաղաքականությունը, նպաստել տնտեսության զարգացմանը»: Այնպես որ աշխատելու է բոլոր պատգամավորների հետ՝ փորձելով իր տնտեսական ծրագրերը կյանքի կոչելու համար հնարավորինս շատ համախոհներ ձեռք բերել: Լրագրողների հետաքրքրող հարցերին ի պատասխան էլ նշեց, թե թեեւ անկուսակցական է, բայց որպես Խաչատուր Սուքիասյան ՀԱԿ միավորման կազմում է եւ աջակցելու է նրան: «Ֆինանսապե՞ս», հետաքրքրվեցին լրագրողները, հիշեցնելով անցյալի լուրերը՝ ՀԱԿ-ին ֆինանսապես աջակցելու մասին: «Դուք ինձ հե՞տ եք եղել ֆինանսավորելիս», հակադարձեց Սուքիասյանը՝ հերքելով, թե երբեւէ ֆինանսավորել է ՀԱԿ-ին: Որ այժմ էլ այդպիսի ակնկալիք կարող է լինել իրենից, դա անգամ վիրավորական համարեց. «Ես այն գործիչն եմ, որ ոչ թե ֆինանսապես պետք է աջակցի կոնգրեսին, այլ իր ունեցած պոտենցիալով... Ես ընդամենը եղել եմ շարժման անդամ», ասաց նա՝ հավելելով, որ ե՛ւ այն ժամանակ, ե՛ւ այժմ գոհ է եղել ՀԱԿ-ի գործունեությունից: ՀԱԿ-ի համամասնական ցուցակում եւս գուցե Սուքիասյանը ներառվի՞: Սուքիասյանն այդ հարցը թողել է Լեւոն Տեր-Պետրոսյանի հայեցողությանը՝ նա ինչպես որ որոշի: Մարտի 1-ի դեպքերի դատավարությունների ընթացքը բացասաբար գնահատեց, իսկ իր մասով էլ նկատեց, թե փորձությունների միջով անցնելն իրեն գուցե ավելի փորձառու դարձրեց՝ պետք է այդ ճանապարհն անցներ. «Հնարավոր է, որ ավելի հմուտ մեկը դարձա, եւ հիմա ավելի մեծ հաճույքով եմ տրամադրված փոփոխությունների: Իսկ ընդհանրապես՝ պետության կայացման ընթացքում ամեն ինչ էլ պատահում է, եւ մոտիկ անցյալի այս իրադարձությունները գուցեեւ նպաստեցին հասարակության փոխվելուն, շատ հարցերի նորովի նայելուն»:

Ծագեց նաեւ այն հարցը, թե արդյոք չի՞ մտահոգվում, որ իր մանդատ վայր դնելով գուցե իրեն ընտրած քաղաքացիների վստահությունն է չարաշահել, եւ նրանք այլեւս իրեն չեն վստահի: Սուքիասյանը համաձայն չէր, ընդհակառակը՝ այդ քաղաքացիները համեմատելու եւ եզրահանգումներ անելու հնարավորություն են ունեցել (թիվ 10-ից Խաչատուր Սուքիասյանից հետո պատգամավոր է դարձել Արտաշես Գեղամյանի կուսակից Արա Սիմոնյանը, որը հաղթել էր Նիկոլ Փաշինյանին): Սուքիասյանը նաեւ Փաշինյանին ընտրողների չվստահելու հարց չտեսավ՝ միգուցե իրենից ավելի են վստահել նրան ընտրողները, բայց մթնոլորտն է ուրիշ եղել, եւ իշխանությունն իր ողջ ներուժը կենտրոնացրած է եղել Ն. Փաշինյանի դեմ: Լրագրողները հետաքրքրվեցին նաեւ նույն ընտրատարածքից պատգամավոր դառնալու մտադրություն ունեցող մեկ այլ մրցակցի՝ Գարեգին Նուշիկյանի մասին:

Սուքիասյանն անդրադարձավ մի շարք տնտեսական իրողությունների: Ըստ նրա՝ մեր երկրի տնտեսական խնդիրներից մեկը մարկետինգի ինստիտուտի բացակայությունն է, պետք է օգտագործել սփյուռքի մի շարք գործոններ հայկական արտադրանքն արեւմտյան շուկաներ դուրս բերելու համար: Խորհրդարան գնալուց հետո նա նպաստելու է մի շարք ապրանքատեսակների չհարկման, իսկ որոշ ոլորտներ էլ հատկապես ավելի մանրակրկիտ հարկելու օրենսդրությանը:

Բայց սա թողնենք, քանի որ տնտեսական գործիչ-պատգամավորության թեկնածուն նախընտրական քարոզչության ընթացքում ավելի մանրամասն անդրադարձներ կանի դրանց եւ իր տեսակետները հայտնի կդարձնի հանրությանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

# «Տաշիրի» բարեգործությունն ու նախարարի 3 խնդրանքը

Նախընտրական շրջանում, երբ քննարկման թեմաներն ընտրացուցակներն ու թեկնածուներն են, երբեմն ուշադրության արժանանում են նաեւ բարեգործական միջոցառումներն ու ակցիաները:

Թե ի՞նչ ենթատեքստ ունեն բարեգործական ակցիաները, բարեգործությունը կամ նվիրատվությունը, ստացողի համար շատ կարեւոր չէ. ենթատեքստը դառնում է երկրորդական խնդիր: Կարեւորը՝ շատ ու շատ մարդիկ, որոնք իրապես ֆինանսական աջակցության կարիք ունեն, այս օրերին ստանում են դա:




Բարեգործական ակցիայի ականատես եղանք նաեւ երեկ: «Տաշիր» բարեգործական հիմնադրամը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում բարձր առաջադիմություն ունեցող 200-ից ավելի ուսանողների, որոնք Լեռնային Ղարաբաղից ու Վրաստանի Սամցխե Ջավախքի նահանգից են ու սովորում են Հայաստանի պետական բուհերում: Ուսանողներից յուրաքանչյուրը կստանա 200 հազար դրամ, որը հիմնադրամը նրանց տրամադրելու է առձեռն:

**Արտակ Ճաղարյանը**՝ Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավարը, սակայն, ընդգծում է՝ Սամվել ու Կարեն Կարապետյանների բարեգործական նախաձեռնությունները քաղաքական ենթատեքստ երբեք չեն ունեցել. «Ցավոք, արված գործերը երբեմն շահարկումների տեղիք են տալիս»:

Կրթության ու գիտության նախարար **Արմեն Աշոտյանը** նույնպես ներկա էր միջոցառմանը, հիմնադրամի ակցիան, ըստ նախարարի, բացառիկ է, համենայն դեպս նրանով, որ համաձայնագիրը ստորագրելուց հետո 10 օր է անցել, իսկ մարտի 16-ից արդեն ուսանողները կարող են ստանալ իրենց գումարները:

Նախարարը դիմելով հավաքված ուսանողներին, նշեց, որ նրանց ուղղված 3 խնդրանք ունի: Առաջինն ինչ-որ առումով նաեւ պահանջ է: «Ավարտելուց հետո, հնարավորության սահմաններում, խնդրում եմ վերադառնալ Ջավախք եւ Արցախ, որտեղ ձեր արմատներն են: Պատմական հայրենիքի այս 2 հատվածներում մենք պարտավոր ենք ունենալ խելացի եւ ուշիմ երիտասարդներ», ասաց Արմեն Աշոտյանը:

Նախարարի՝ ուսանողներին ուղղված մյուս խնդրանքներն էին լավ սովորելը եւ ստացված գումարն իսկապես կրթական կարիքներին ուղղելը:

«Հուսով եմ՝ շատերիդ նորից կտեսնեմ, բայց ոչ այնքան Հայաստանում, որքան Լեռնային Ղարաբաղում ու Ջավախքում», հավելեց նախարարը:

Առաջիկայում «Տաշիր» հիմնադրամն աջակցություն կտրամադրի նաեւ Հայաստանի, Արցախի ու Ջավախքի 200-ից ավելի մանկավարժների:

Ի. Պ.

# Երեք միջազգային ընկերություն կմրցեն «Հյուսիս-հարավի» խորհրդատու դառնալու համար

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, երեկ, գնահատող հանձնաժողովի կողմից բացվել են «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրության՝ ֆինանսական առաջարկների փաթեթները: Իրենց առաջարկներն են ներկայացրել երեք կազմակերպություններ: Safege (Բելգիա) եւ Eptisa (Իսպանիա) համատեղ ձեռնարկությունն առաջարկել է 6 մլն 98 հազար դոլար, Roughton International Ltd. (Միացյալ Թագավորություն), WYG International Ltd. (Միացյալ Թագավորություն) եւ «Ճաննախագիծ» (Հայաստան) կոնսորցիումը՝ 6 մլն 78 հազար դոլար, Renardet Ingenieurs Conseils S.A. (Շվեյցարիա), Bonifica Italia S.r.l. (Իտալիա) համատեղ ձեռնարկությունը՝ 5 մլն 962 հազար դոլար:**

**Ֆինանսական առաջարկները գնահատելուց հետո ընդհանուր գնահատման արդյունքները հանձնաժողովը կուղարկի Ասիական զարգացման բանկի հաստատմանը, որից հետո դրանք կներկայացվեն կառավարման խորհրդի, այնուհետեւ Հայաստանի կառավարության հաստատմանը: Դրանից հետո հաղթող կազմակերպության հետ կկնքվի պայմանագիր:**

**Հաղորդագրության մեջ նշվում է, որ «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրության մրցույթի համար հայտեր էին ներկայացրել 21 կազմակերպություններ: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից ընդգրկվել էին իրենց որակավորմամբ լավագույն 6 կազմակերպությունները, որոնց ուղարկվել էր տեխնիկական եւ ֆինանսական առաջարկներ ներկայացնելու հրավեր: Դրանցից տեխնիկական եւ ֆինանսական առաջարկներ էին ներկայացրել 4 կազմակերպությունները, որոնցից նախատեսված 750 միավորի շեմն անցել էին երեքը, որոնք էլ մասնակցել են ֆինանսական առաջարկների փաթեթների հրապարակային բացմանը:**

Ա. Ս.

# Առողջության ապահովագրության պայմանագիր ՎիվաՍելի սպասարկման կենտրոններում

ՎիվաՍել-ՄՏՍ եւ «Նաիրի Ինշուրանս» ընկերությունների համագործակցության շրջանակներում, ՎիվաՍել-ՄՏՍ-ի բոլոր սպասարկման կենտրոններում ՀՀ պետական մարմինների, ինչպես նաեւ կրթության, մշակույթի եւ սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպությունների աշխատակիցներն այժմ կարող են ձեռք բերել առողջության պետական ապահովագրության պայմանագիր՝ ընտրելով առաջարկվող ապահովագրական փաթեթներից մեկը:

Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

պետական մարմնի կամ պետական կազմակերպության տրամադրած կտրոնը,

պետական մարմնի կամ պետական կազմակերպության աշխատակցի անձնագիր,

ընտանիքի անդամի անձնագիրը, եթե ապահովագրվում է նաեւ աշխատակցի ընտանիքի անդամը:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

# Հնդկաստանի անվան այգին կզարդարի Երեւանը

Երեւանը կունենա Հնդկաստանի անվան այգի: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում այգու համար տարածքն արդեն տրամադրվել է: Հնդկաստանի կառավարության կողմից նախագծին հավանություն տալուց հետո հատկացված տարածքում կսկսվեն շինարարական աշխատանքները:

Երեկ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանդիպել է Հայաստանում Հնդկաստանի դեսպան **Աչալ Կումար Մալհոտրային**: Այս մասին տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանից:

Հնդկաստանի դեսպանը շնորհակալություն է հայտնել տրամադրված տարածքի համար եւ նշել, որ նախագիծը կլինի հայ-հնդկական դարավոր բարեկամության եւս մեկ ապացույցը:

Իսկ **Տարոն Մարգարյանը** նշել է՝ Երեւանի քաղաքապետարանը պատրաստ է գործընկերային կապերն ընդլայնել ու ամրապնդել ոչ միայն Դելիի, այլեւ Հնդկաստանի մյուս քաղաքների հետ:

Ի. Պ.

ԱԶԳ

# Երախտավորներ

Բոլորեց հայ պատմագիտական մտքի երեւելի ներկայացուցիչ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ եւ պետական մրցանակի դափնեկիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Ծատուր Պավելի Աղայանի ծննդյան 100-ամյակը:

Ծ. Պ. Աղայանը ծնվել է 1912 թ. հունվարի 13-ին Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգի Փիփ հայկական գյուղում, երկրագործի ընտանիքում: Յոթամյա կրթությունը ստացել է Շամխորի շրջանի Գոլիցինո գյուղում, որը գերազանցությամբ ավարտելուց հետո 1926 թ. ընդունվել է Գանձակի հայկական մանկավարժական տեխնիկումը: Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով 1932 թ. մեկնել է Մոսկվա, ուր սովորում է Ն. Գ. Չերնիշեւսկու անվան պատմափիլիսոփայական ինստիտուտի պատմության եւ զուգահեռաբար փիլիսոփայության ֆակուլտետում: Այստեղ նա աշակերտել է ռուս անվանի պատմաբաններ Գրեկովին, Կոսմինսկուն, Տիխոմիրովին, Մինցին, Սկազկինին, Նեչկինային եւ այլոց: 1937թ. Աղայանը գերազանցության դիպլոմով էքստեռն ավարտել է նաեւ Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը եւ ընդունվել Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրան: Երիտասարդ պատմաբանի գիտական հետաքրքրությունները ճիշտ ուղու վրա դնելու գործում կարեւոր դեր են խաղացել ժամանակի նշանավոր հայագետներ Հ. Մանանդյանը, Հ. Օրբելին, Հ. Կուսիկյանը: 1941 թ. Մոսկվայում Աղայանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն եւ անմիջապես հրավիրվել Բաքու, որտեղ աշխատել է ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար, տնօրենի տեղակալ:

## Պատմաբանի դիմանկարը

### *Ակադեմիկոս Ծատուր Աղայանի ծննդյան 100-ամյակի առթիվ*



1948 թ. Աղայանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն եւ նույն թվականին էլ Հայաստանի կառավարության կողմից հրավիրվել Երեւան: Այստեղ երկար տարիներ աշխատել է Գիտությունների ակադեմիայի համակարգում (պատմության ինստիտուտի գիտաշխատող, բաժնի վարիչ, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար), եղել Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական բաժնի տնօրեն, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի անդամ եւ Կենտկոմի գիտության եւ բուհերի բաժնի վարիչ, ընտրվել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1950 թ.՝ 38 տարեկան հասակում ընտրվել է ԳԱ թղթակից անդամ, իսկ 1968 թ.՝ ակադեմիկոս:

Ծ. Աղայանը մանկավարժական, հասարակական ու քաղաքական անդուլ գործունեությունը զուգակցել է արգասաբեր գիտական աշխատանքներին: Հենց դա է եղել նրա կյանքի իմաստն ու հավատամքը: 50 տարի շարունակվող նրա գործունեությունն այս բնագավառում պսակվել է պատկառելի ժառանգությամբ: Նա հեղինակել է շուրջ 400 անուն աշխատություններ (այդ թվում՝ 35 մենագրություններ): Հիրավի վիթխարի, պատկառազդու ժառանգություն, որի շատ դրսեւորումներ այսօր էլ շարունակում են մնալ մեր պատմագիտության մնայուն արժեքներից:

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության նրա տեսադաշտը խիստ ընդգրկուն է: Այն գլխավորապես ներառում էր 19-20-րդ դարերի հայ կյանքի ամենատարբեր դրսեւորումները՝ հայ-ռուսական հարաբերությունները, ազգային-ազատական, հեղափոխական եւ գյուղացիական շարժումները, Հայաստանի խորհրդայնացումը, սոցիալական շինարարությունը եւ այլն: Նա ամենաառաջիններից էր, որ առանձին ուսումնասիրություններով մոռացության փոշիներից վեր բարձրացրեց հանիրավի բռնաճնշումների ենթարկված եւ ամենատիրության զոհ դարձած հայ մի շարք գործիչների (Ներսիկ Ստեփանյան, Աղասի Խանջյան, Արշավիր Մելիքյան, Դրաստամատ Տեր-Սիմոնյան, Սարգիս Լուկաշին, Սարգիս Կասյան, Լեւոն Միրզոյան, Հայկ Բժշկյանց եւ այլոց) անունները: Դարձյալ առաջիններից էր (Մ. Գ. Ներսիսյանի, Զ.Ս. Կիրակոսյանի եւ այլոց հետ), որ բարձրացրեց հայ ազատագրական պայքարի եւ Հայոց Մեծ եղեռնի գիտական պատմության ուսումնասիրության հարցը եւ հենց ինքն էլ ձեռնամուխ եղավ դրանց մշակմանը: Տարիների տքնաջան պատմագիտական ու աղբյուրագիտական հսկայական աշխատանքի արգասիք է պատմաբանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» ստվարածավալ մենագրությունը (1976): Այստեղ հանգամանորեն վեր են հանվում Արեւմտյան Հայաստանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի հիմնական դրվագները, հայդուկային-ֆիդայական շարժման տնտեսական, կրոնական ու քաղաքական պատճառները, ըստ արժանվույն գնահատվում զորավար Անդրանիկի եւ ժողովրդական մյուս հերոսների խաղացած դերը հայ ազատամարտի պատմության մեջ: Ի դեպ, գրքի սկզբնական տարբերակը կրում էր «Անդրանիկ» խորագիրը, սակայն այն տարիներին տիրապետող քաղաքական հայեցակետը թույլ չտվեց գրքի հրատարակումը այդ վերտառությամբ, լույս տեսավ առավել ընդունելի վերնագրով: Գրքի երկրորդ հրատարակության ժամանակ հնարավոր եղավ վերականգնել հեղինակային մտահղացումը, լույս տեսավ «Անդրանիկ. դարաշրջան, դեպքեր, դեմքեր» վերտառությամբ (1994):

Պատմաբանը հիանալի էր հասկանում, որ Անդրանիկի եւ նրա զինակիցների վերաբերյալ իր մենագրությունը որքան էլ որ ամբողջությամբ ու գիտականությամբ նոր խոսք էր նախորդ բոլոր հրատարակությունների համեմատությամբ, բայց դարձյալ շատ ասելիք էր մնում, որ վերապահվում էր ապագա պատմաբանին. «Անդրանիկի մասին գրվածները,- խոստովանում է Ծ. Աղայանը,- նաեւ մեր այս գիրքը, բոլորն էլ Անդրանիկի կյանքի ու գործի թույլ արտացոլանքն են միայն: Այդ մեծ կյանքն ու գործը դեռ սպասում են ապագա տաղանդավոր գրչին, պատմաբանին ու վիպագրին»: Պատմաբանի «Կարապի երգը» դարձավ մահվան նախօրյակին ավարտած «Հոկտեմբերը եւ հայ ժողովրդի ազատագրական պայքարը» մենագրությունը (1982), որը, ըստ էության, լինելով նախորդի օրգանական շարունակություն, ամփոփում է 1918-1920 թթ. որքան որ հերոսական, այնքան էլ ողբերգական իրադարձությունների նկարագրությունը:

Հայ ազատամարտին նվիրված Ծ. Աղայանի ուսումնասիրությունները հայ պատմագիտության նվաճումներից են, որոնք իրենց կարեւոր նշանակությամբ մնայուն ու պատվավոր տեղ են ապահովել հեղինակին հայ պատմագիտության անդաստանում: Անշուշտ, չպետք է մոռանալ, որ Ծ. Աղայանը մարքսիստ-պատմաբան էր, եւ նա ու իր սերնդակից պատմաբանները պատմության հարցերը քննարկում էին մարքսիստական պատմահայեցողության դիրքերից, սակայն նա այն քչերից էր, որ աշխատում էր հնարավորինս մնալ պատմականության եւ ազգային շահախնդրությունների դիրքում:

Ծ. Աղայանը կոլեկտիվ կամ ընդհանրացնող շատ աշխատանքների համահեղինակ է, խմբագիր կամ գրախոս: Նա գործուն մասնակցություն է ունեցել «Խորհրդային Հայաստանի պատմության ուրվագծեր»-ի եռահատորյակի, «Հայ ժողովրդի պատմություն» գիտական-ակադեմիական ութհատորյակի, բազմահատոր Հայկական հանրագիտարանի, 7-10-րդ դասարանների հայոց պատմության դասագրքերի, ձեռնարկների եւ այլ աշխատանքների ստեղծմանը: Ծ. Աղայանին ենք պարտական երկհատոր ստվարածավալ «Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» ռուսերեն ժողովածուի, «Զորավար Գայ», «Արշավիր Մելիքյան», «Աղասի Խանջյան», «Սարգիս Կասյան» եւ այլ հրատարակությունների համար:

Ծ. Աղայանը մասնակցել եւ հայ պատմագիտական միտքը հաջողությամբ է ներկայացրել միջազգային եւ միութենական գիտական կոնգրեսներում, գիտաժողովներում (Մոսկվա, Լենինգրադ, Վիեննա, Ուլան-Բատոր, Սան Ֆրանցիսկո, Անկարա, Բուխարեստ, Սոֆիա եւ այլուր):

Ծ. Աղայանի անսպառ եռանդն ու աշխատասիրությունը դրսեւորվել են նաեւ մանկավարժության եւ գիտակազմակերպչական գործունեության բնագավառներում: Տակավին պատանի հասակում նա հայոց պատմություն է դասավանդել Շահումյանի շրջանի եւ ԼՂԻՄ-ի հայկական դպրոցներում, հետագայում եղել Բաքվի N 3-րդ հայկական միջնակարգ դպրոցի ուսմասվար, դասավանդել Ս. Մ. Կիրովի անվան պետական համալսարանում եւ Բաքվի մանկավարժական ինստիտուտում, եղել նույն ինստիտուտի հայկական բաժնի պրոռեկտոր: Երեւան տեղափոխվելուց հետո դասախոսական աշխատանք է կատարել Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում եւ Երեւանի պետական համալսարանում, 1979-ից մինչեւ մահ՝ համալսարանի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ էր: Այսօր գործող պատմաբան կադրերի միջին եւ ավագ սերնդի ներկայացուցիչներից շատերը եղել են նրա սաները: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 40 ատենախոսություն:

Ծ. Պ. Աղայանի ծառայություններն ու վաստակը ըստ արժանվույն են գնահատվել: Նա զբաղեցրել է բարձր կուսակցական, ակադեմիական ու բուհական պաշտոններ, արժանացել է շքանշանների ու մեդալների, շնորհվել է պետական մրցանակ: Անկախ զբաղեցրած պաշտոնից ու դիրքից գործընկերներն ու սաները հիշում են նրան որպես բարյացակամ եւ պատրաստակամ անձնավորության, նրա անձի մեջ համատեղված էր ոչ միայն ներհուն գիտնականը, այլեւ բարի ու ազնվակիրթ մարդը:

**Ակադեմիկոս**
**ՎԼ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ**
**Պրոֆեսոր**
**Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

---

**ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ**

## «Զարթօնքի» այս տարվա «Բացառիկը»-ը




«Զարթօնք» օրաթերթը սփյուռքահայ մամուլի տարեգրության մեջ եւ առհասարակ սփյուռքահայ մշակույթի եւ ազգային կյանքում եզակի դեր ունեցող պարբերականն է, որ 1936-ից մինչ այսօր առանց դադարի շարունակում է լույս տեսնել Բեյրութում: 2012-ի «Զարթօնքի» «Բացառիկ» համարը (պատասխանատու խմբագիր՝ Պայծիկ Գալայճյան) նվիրված է հոբելյանական երկու տարեթվերի, թերթի՝ 75 եւ Ռամկավար ազատական կուսակցության 90-ամյակներին (1921-2011): Վերջինիս հոբելյանական հանդիսությունը շուքով կատարվեց տեղի Թեքեյան կենտրոնի «Հրաչյա Սեդրակյան» սրահում եւ որի ընթացքը հանգամանալի ներկայացված է հանդեսի էջերում՝ արժեւորելով ՌԱԿ անցած ուղին, ազգային-հասարակական կյանքում նրա ողեգրած սկզբունքների ու գաղափարների հաստատուն ընթացքը: Հրատարակված են բանախոսների՝ **Հակոբ Գասարճյանի**, **Հարութ Երկանյանի**, **Արտավազդ Մելիքսեթյանի** ելույթները: Անդրադարձ է արված Կահիրեում կազմակերպած ՌԱԿ 90-ամյակին եւ «Արեւ» թերթի նոր խմբագրատան բացման հանդիսությանը:

«Անոնք քար քարի վրա դնելով բարձրացուցին Ռ.Ա.Կ.-ի կառույցները» հոդվածում **Հակոբ Վարդիվառյանը** նախ անդրադառնում է ՌԱԿ-ի՝ ցայսօր սեփական պատմագրությունը չունենալու պատճառներին: Ինչ վերաբերում է **Կառլեն Դալլաքյանի** «Ռամկավար ազատական կուսակցության պատմությունը» երկհատորյակին, գտնում է, որ այն չի արտացոլում կուսակցության իրական եւ ամբողջական պատմությունը, հիմնականում այն նկատառումով, որ մեկ այլ կուսակցության պատկանող պատմագրող չի կարող ներկայացնել օբյեկտիվ իրականությունը՝ գաղափարական եւ այլ դրդապատճառներով:

Հրատարակվող հոդվածում նա փորձում է ամփոփ նկարագրությունը տալ կուսակցության Կենտրոնական վարչության ատենապետների գործունեության, արձանագրելով նրանց ներդրումը ՌԱԿ կայացման մեջ՝ սկսած 1921-ին ընտրված կուսակցության առաջին ատենապետ Վահան Թեքեյանից:

Զարթօնքյան անցած օրերի հուշի մի պատառիկ է ներկայացնում **Հակոբ Ավետիքյանը**՝ թերթի 1979-ի՝ Նոր տարվա բացառիկ համարի սրբագրման եւ տեխնիկական վերջին աշխատանքների հետ կապված, երբ ստիպված է լինում իր ուսուցչի եւ խմբագրապետի՝ Գերսամ Ահարոնյանի՝ երբեւէ անառարկելի համարվող խմբագրականից 70 տող կրճատել՝ եւ վեհերոտ փորձի անհանգստությամբ սպասում՝ հաջորդ օրվա նրա խոսքին... Հուշը գրված է ուսուցչի անձի նկատմամբ ակնածանքի խոր զգացումով:

«Զարթօնքի» բացառիկի այս համարում զետեղված բազմաբնույթ տեղեկությունները ստեղծում են ազգային, հասարակական, քաղաքական խճանկարային պատկեր՝ ինչպես համայնքային կյանքի, նաեւ հայաստանյան եւ տարածաշրջանային իրադարձությունների (Եգիպտոս, Թունիս, Լիբիա):

Առանձին հրապարակումներ նվիրված են մշակութային եւ հասարակական գործիչների հոբելյանական տարեթվերին, ինչպես Զավեն Ա. քհն Արզումանյանի՝ ՀԲԸ Միության հիմնադիր-բարերար Պողոս Նուբար փաշայի 160-ամյակին, գրող, հրապարակագիր Վարդգես Պետրոսյանի 80-ամյակին նվիրված Արամ Սեփեթճյանի հոդվածներն են: Ընդարձակ հոդվածով **Վաչե Սեմիրճյանն** անդրադառնում է սփյուռքահայ գրող Վահրամ Մավյանի գործունեության տարբեր շրջաններին, արժեւորում նրա գրականությունն ու գործը՝ նրան համարելով «սփյուռքի ոգիին իրաւ արտահայտիչը»:

Հրանտ Դինքի նահատակության 5-րդ տարելիցի առիթով Հակոբ Ադամյանը ստեղծում է ուշագրավ գրական-դիմանկար: Բեյրութի Հայկազեան համալսարանի հրատարակած Հակոբ Արսենյանի Հայոց ցեղասպանությանը վերաբերող հուշերի՝ «Դեպի Գողգոթա» գիրքը ներկայացնում է **Հարություն Իսկահայանը**:

Եվ գեղանկարչությանը վերաբերող, հաճելիորեն ընթերցվող **Մովսես Ծիրանու** հրապարակումը ծանոթացնում է Էդիկ Բերդյանի նկարչությանը, նրա արվեստի մեթոդին եւ արվեստագրի նկարագրին. «Այն ստեղծագործողներեն է, որոնք «անիծուած» են ստեղծագործական անկասելի տենդով... Տանջանքներու եւ տուայտանքներու քուրային մէջ ջրդեղուած այս արուեստագէտը ունի նկարագրային կուսական մաքրութիւն եւ արտահայտուելու երեխայական բնոյթ»:

Բացառիկի էջերին՝ Հակոբ Վարդիվառյանի ներկայացմամբ, անցնող տարվա մեր կորուստներն են՝ անուն առ անուն, լուսանկարներով հիշատակված. Օհան Դուրյան, Շարթ, Անահիտ Բայանդուր, Հովհաննես-Պետրոս պատրիարք, Դավիթ Բեջանյան, Համբարձում Սահակյան, Պողոս Ճելալյան, Ջեք Գեւորգյան, Դոնարա Մկրտչյան, Հրաչ Բարթիկյան, Պարույր Մուրադյան, Արմեն Հովհաննիսյան, Նորայր Փահլավունի, Պողոս Ճելալյան, Վանուշ Խանամիրյան, Սարո Սարուխանյան, Ժիրայր Ավետիսյան, Լյուդվիգ Ղարիբջանյան, Կարպիս Սուրենյան...

Զետեղված են նաեւ առողջապահական, կրոնական բնույթի հոդվածներ, մարզական տեղեկություններ, աշխարհի բնակչության վիճակագրական տվյալներ, ամանորյա խոհեր եւ զանազան այլ նյութեր:

**Ս. Բ.**

# Քնարիկի նամակը` «հարազատ Բաքուն» տեսնելու անկատար ցանկությամբ

Ադրբեջանական քարոզչության հիմնական «ուղեղները» կացնային մեթոդներով առաջնորդվողներին բնորոշ մոտեցմամբ այդպես էլ չեն փորձում յուրացնել, առավել եւս հասկանալ, որ ստի ու կեղծիքի վրա հիմնվելու դեպքում արդյունքը անվերջ ձգտելու է զրոյի: Ավելին, երբ նույն մեթոդը կամ տեխնոլոգիան քանիցս կիրառվում է, զավեշտալի է դառնում անգամ շրջանառության մեջ դնելու մոտեցումը:

Թե «Եվրոտեսիլի» մրցույթին մասնակցելուց հրաժարվելը որքանով է հարմար կամ անհարմար Հայաստանին, շատ է խոսվել, մինչդեռ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը, կիսագրագետ ուսանողներին հատուկ «ուսուցանողի» կեցվածքից ելնելով, իր պարտքն է համարել հայերին ու Հայաստանին «դաս» տալու, թե «Եվրոտեսիլը» չպետք է օգտագործվի քաղաքական նպատակներով, «առավել եւս ղարաբաղյան հակամարտության համատեքստում»:

Ռուսական ասացվածքը շատ հարմար ձեւով Մամեդյարովին կհիշեցներ սեփական կովի բառաչը զսպելու անհրաժեշտության մասին, սակայն քաղաքականության մեջ, այն էլ քարոզչությամբ անարդարը նորմալի տեղ մատուցելու խնդիր լուծելիս, ինչպես ասում են, փրփուրներից էլ կկառչեն: Եվ այսպիսի հայտարարություն, այն էլ գերմանական «Welt Kompakt» պարբերականին, մատուցում է այն երկրի արտաքին քաղաքականությունը ներկայացնող նախարարը, որը ղարաբաղյան խնդրի համատեքստում քաղաքականացնում, կարելի է ասել` նավթայնացնում է ամեն ինչ, անգամ նույն այդ «Եվրոտեսիլի» մրցույթը:

Մյուս կողմից էլ, շարունակելով ադրբեջանցի մեծ ու փոքրի` Հայաստանի նախագահին կամ այլոց ուղղված նամակների, ըստ ադրբեջանցիների, հաջողված մարտավարությունը, երեկ «1news.az»-ը մեջտեղ էր բերել մի նամակ եւս, այս անգամ ոմն Քնարիկ Բաղդասարյանի անունից, որ իբր ապրում է Ուկրաինայում ու երազում այցելել իր բնակության նախկին վայրը` Բաքու: «Ընթերցողի նամակ» վերտառությամբ ադրբեջանական կայքէջը մատուցում է, թե «Բաքվից հեռանալու պահից չի եղել մի ակնթարթ», որ աշխարհին անհայտ Քնարիկ Բաղդասարյանն իր աչքերի առաջ չպատկերացներ «հարազատ Բաքվի պատկերը»:

Տարօրինակորեն լռելով կամ «մոռանալով» Բաքվից հեռանալու պատճառների` Բաքվի ջարդերի ու հայերի գլխին կախված սպառնալիքի մասին` ուկրաինահպատակ Քնարիկը իբր ներկայացրել է իր երազանքը, թե որպես «Եվրոտեսիլի» հյուր կցանկանար հայտնվել Բաքվում: Բայց Քնարիկը խոստովանել է, որ մուրազը փորում մնաց. «Ինձ անհասկանալի պատճառով Հայաստանը հրաժարվեց մասնակցությունից»:

Այդուհետեւ գալիս է ակնհայտը` ապացուցելու, որ Ուկրաինայում բնակվող ինչ-որ Քնարիկ Բաղդասարյանի նամակում «արտացոլվում» է ադրբեջանական հայտնի թեզը «համայնքների» մասին. «Ինձ համար ցավալի է, որ մենք զրկվեցինք մեր հարազատ քաղաքը այցելելու հնարավորությունից, քանի որ Հայաստանի քաղաքական գործիչները շահագրգիռ չեն, որ ուղղակի շփումներ լինեն մեր համայնքների ներկայացուցիչների միջեւ»:

«Ես երազում եմ, թե երբ կկարողանամ վերադառնալ իմ հարազատ Բաքու, որտեղ մենք այնքան լավ ու բարեկամաբար ապրում էինք, որտեղ երբեք կարիքի մեջ չենք եղել` զբաղվելով մեր սիրելի աշխատանքով ու բավարար վաստակելով», հակահայկական քարոզչության հիմնական կրողներից մեկը հանդիսացող ադրբեջանական կայքէջին ուղղված գովեստներով շաղախն իր էլեկտրոնային նամակում այսպես է իբր ավարտել Քնարիկ Բաղդասարյանը:

Զավեշտն ու կեղծիքն ակնհայտ են, սակայն եթե, մարդ ես էլի, իսկապես ինչ-որ Քնարիկ Բաղդասարյան Ուկրաինայից կարոտախտի ճիրաններում իսկապես չի դիմացել ու հարազատ Բաքու այցելելու մուրազը փորում այսպիսի նամակ է հեղինակել, մնում է տիկնոջը հիշեցնել, որ հայերի, հայության, անգամ հայկական ազգանվան վերջավորությանը նմանվող ամեն մի հիշատակում Ադրբեջանի սահմաններում հանդիպում է կտրուկ արգելքի:

Այնպես որ տիկին Քնարիկի երազանքն, անկախ ամեն ինչից, դժվար թե իրականություն դառնար, հատկապես որ Ադրբեջանում դեռ շարունակում են հայերի դեմ ուղղված ատելության ու այլատյացության արշավները, իսկ այդպիսի պայմաններում որեւէ հայի անվտանգությունը երաշխավորելը բավականին բարդ ու պատասխանատու գործ է:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Միջերկրական ծովում նավթ եւ գազ են հայտնաբերվել

«Մոդիին» եւ «Ադիրա» ընկերությունները հաղորդել են, որ նավթ եւ գազ են հայտնաբերվել Իսրայելի ափերի մոտ գտնվող «Գաբրիելա» եւ «Իցխակ» հանքավայրերում: Հրապարակված տեղեկությունների համաձայն, Թել Ավիվից մոտավորապես 24 կմ հյուսիս` Միջերկրական ծովի ծանծաղուտում գտնվող երկու հանքավայրերում կարող են լինել 232, 2 մլն բարել նավթ եւ շուրջ 50 մլրդ խորանարդ մետր բնական գազ:

«Գլոբս» թերթը հաղորդում է, որ այդ հետեւությունները հիմնված են սեյսմիկ վերլուծության արդյունքների վրա: «Մոդիին» ընկերության համատերերից մեկը` **Ցախի Սուլթանը** հայտարարել է, որ այժմ կարելի է 100-տոկոսանոց վստահությամբ խոսել առեւտրային առումով շահավետ նավթային հանքավայրի հայտնաբերման մասին:

Սուլթանի գնահատումների համաձայն, առաջին հորատումը տեղի կունենա 2012-ի վերջերին, իսկ նավթի արդյունահանումը կսկսվի 5 տարվա ընթացքում:

Ներկայումս Իսրայելի ափերի մոտ շահագործվող «Լեւիաթան» գազի խոշորագույն հանքավայրը գնահատվում է 450 մլրդ խորանարդ մետր, «Թամար» հանքավայրը` մոտ 300 մլրդ խորանարդ մետր: Իսրայելի տնտեսական ջրերում գազի ընդհանուր պաշարները գնահատվում են 1,3 տրիլիոն խորանարդ մետր:

Հիշեցնենք, որ Միջերկրականի ծանծաղուտներում, Լիբանանի, Իսրայելի ու Կիպրոսի միջակայքում հայտնաբերված գազի ու նավթի պաշարների շահագործման իրավունքի հարցը վիճարկվում է այդ երկրների կողմից. եվ միջեւ:

# Սանտորումը հաղթեց Ալաբամայում եւ Միսիսիպիում



ԱՄՆ Հանրապետական կուսակցության նախնական ընտրություններում Փենսիլվանիայի նախկին սենատոր Ռիկ Սանտորումը հաղթել է երկրի հարավային երկու նահանգներում` Ալաբամայում եւ Միսիսիպիում: Այդ մասին հաղորդում է ABC News հեռուստաալիքը:

Ալաբամայում Սանտորումը ստացել է հանրապետականների համակիրների քվեների 35 տոկոսը: Երկրորդ տեղը կիսում են Ներկայացուցիչների պալատի նախկին նախագահ Նյուտ Գինգրիչը եւ Մասաչուսեթսի նախկին նահանգապետ Միթ Ռոմնին: Նրանք ստացել են 29 տոկոս:

Միսուրիի նահանգում Սանտորումը ստացել է 33 տոկոս, երկրորդ տեղում հայտնված Գինգրիչը` 31 տոկոս, Ռոմնին` 30 տոկոս:

Միթ Ռոմնին եւ Ռիկ Սանտորումը ներկայումս համարվում են հանրապետականների գլխավոր թեկնածուները ԱՄՆ նախագահական ընտրություններում: Նոյեմբերի 6-ին կայանալիք ընտրություններում հանրապետականների միասնական թեկնածուն կպայքարի դեմոկրատների թեկնածու, գործող նախագահ Բարաք Օբամայի դեմ:

ԴԱՄԱՍԿՈՍ

# Ասադը չի բանակցի զինված ընդդիմության հետ

## *Խորհրդարանական ընտրությունները` մայիսի 7-ին*




Սիրիայի նախագահ Բաշար Ասադը մերժել է խաղաղ կարգավորման վերաբերյալ ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ դեսպանորդ Կոֆի Անանի արած առաջարկությունը: Այդ մասին հաղորդում է CNN հեռուստաալիքը` վկայակոչելով Դամասկոսի աղբյուրներ:

Վերջիններիս տվյալներով, Ասադը պատրաստ չէ որեւէ զիջում անել, քանի դեռ գրոհայինները զենքը վայր չեն դրել: Բացի դրանից, նա Կոֆի Անանին առհասարակ չի ճանաչում որպես պաշտոնական միջնորդի:

Կոֆի Անանը Սիրիայում բանակցել է ինչպես նախագահ Ասադի, այնպես էլ ընդդիմության հետ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ նրա բանակցությունները կապված են բռնությունների եւ սպանությունների դադարեցման, մարդասիրական կազմակերպությունների ազատ այցելությունների, ինչպես նաեւ վարչակարգի եւ ընդդիմության երկխոսության ծավալման հետ:

Նախագահ Բաշար Ասադը պաշտոնապես հայտարարել է, որ Սիրիայում խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան մայիսի 7-ին: Սիրիական Sana պաշտոնական գործակալությունը հաղորդում է, որ հայտարարությունն արվեց այն պահին, երբ Կոֆի Անանը նրանից ակնկալում էր «կոնկրետ առաջարկություններ»:

Միաժամանակ նշվում է, որ վերջին մեկ օրվա ընթացքում Սիրիայում սպանվել են 43 անձինք, որոնց մեծամասնությունը զինվորներ են եւ անվտանգության ուժերի աշխատակիցներ: Նրանք սպանվել են ապստամբների հարձակումների հետեւանքով, հաղորդում է Սիրիայի մարդու իրավունքների դիտորդական խումբը:

Խորհրդարանական ընտրությունները պետք է անցկացվեին 2011-ի սեպտեմբերին, սակայն հետաձգվեցին նախագահ Ասադի հայտարարած բարեփոխումների պատճառով: Դրանք վերաբերում են մասնավորապես կուսակցությունների հետ կապված նոր օրենքին եւ նոր սահմանադրությանը, որը վերջ է դնելու միակուսակցական համակարգին:

Ինչ վերաբերում է սիրիացի գաղթականներին, ՄԱԿ-ի փախստականների գործերի վարչությունը հրապարակել է պաշտոնական վիճակագրություն, որի համաձայն անցյալ տարվա մարտից (երբ սկսվեցին բախումները) իրենց տները հարկադրաբար լքել են 230 հազար անձինք, որոնցից 200 հազարը տեղափոխվել է Սիրիայի ուրիշ շրջաններ, իսկ 30 հազարը փախել է արտասահման, առավելապես` Թուրքիա, Լիբանան եւ Հորդանան: Ընդսմին Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ Սիրիայում ապրում են Իրաքի քաղաքացիական պատերազմի ժամանակ այնտեղ ներգաղթած 110 հազար անձինք:

**Պ. Ք.**

# Երկրաշարժ եւ ցունամի Ճապոնիայում

Մարտի 14-ին Ճապոնիայի ափերի մոտ տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ 6,8 մագնիտուդով, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

ԱՄՆ երկրաբանական ծառայության տվյալներով, ստորգետնյա ցնցումների էպիկենտրոնը եղել է Հոնսյու կղզու արեւելյան ափից 293 կմ հեռու եւ Հոկայդո կղզուց 235 կմ հարավ: Երկրաշարժի օջախը ընդամենը 10 կմ խորության մեջ էր: Ուժեղ ցնցումներ են զգացվել Ճապոնիայի 19 պրեֆեկտուրաներում, հատկապես` Հոկայդո եւ Աոմորի պրեֆեկտուրաներում: Տուժածների եւ ավերածությունների մասին չի հաղորդվում:

Երկրաշարժից հետո իշխանությունները հայտարարել են ցունամիի վտանգի մասին եւ բնակչությանը կոչ են արել չմոտենալ ափին: Եվ իրոք, հետմիջօրեին կես մետր բարձրության ցունամիի ալիքը հասել է հիշյալ երկու պրեֆեկտուրաների ափերին, ավերածություն չպատճառելով: Հաղորդվում է, որ երկաթուղային հաղորդակցությունը չի խափանվել: Տոկիոյի «Նարիտա» միջազգային օդանավակայանը գործում է սովորական ռեժիմով, «Ֆուկուշիմա-1» ատոմակայանում նոր վթար չի արձանագրվել:

Մեկ տարի առաջ` 2011-ի մարտի 11-ին 9 մագնիտուդով երկրաշարժի եւ 10 մետրանոց ցունամիի հետեւանքով զոհվել էր 19 հազար մարդ, «Ֆուկուշիմա-1» ատոմակայանը լրջորեն վթարվել էր: Դրանից հետո Ճապոնիայի ափերի մոտ արձանագրվել են տասնյակ ուժեղ երկրաշարժեր, բայց ոչ մեկը չի հանգեցրել նման աղետալի հետեւանքների:

# Բացառիկ համերգ հատուկ կարիքներ ունեցող երեխաների մասնակցությամբ

Հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը, համագործակցելով համալսարանի այլ ֆակուլտետների հետ, կազմակերպել էր «Մենք տարբեր ենք, բայց հավասար» խորագրով համերգ-միջոցառում:

Միջոցառումը սկսվեց տերունական աղոթքով: Դիմելով միջոցառման մասնակից երեխաներին՝ **Գեղամ սարկավագն** ասաց. «Սա մի գեղեցիկ նախաձեռնություն է, որով գործի ենք վերածում ձեր նկատմամբ ունեցած մեր սերը, ուշադրությունը՝ լցնելով ձեր սրտերը խինդով եւ ուրախությամբ»:



«Մենք տարբեր ենք, բայց հավասար» խորագիրը պատահական չէր ընտրված. իրենց ելույթներով հանդես եկան լսողության, տեսողության եւ այլ խնդիրներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրների աշակերտները:

Համերգի ընթացքում երեխաները զարմացրին իրենց կատարումներով՝ ժողովրդական երգեր, աշխույժ պարեր, ասմունք:

Նրանց հետ փոխադարձ կապը ժեստերի միջոցով իրականացնում էր լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի ժեստերի լեզվի ուսուցիչ **Զուբեյդա Մելիքյանը**:

Վերջինս կոչ արեց հանդիսատեսին՝ ճանաչել, սիրել, ընդառաջ քայլել հատուկ կարիքներ ունեցողներին, հոգեպես հավասարվել նրանց, ընդունել նրանց այնպիսին, ինչպիսին որ կան:

Հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ **Թամարա Գալստյանը** կարեւորում է նման ձեռնարկները. «Ամիսներ շարունակ պատրաստվել ենք այս միջոցառմանը: Դժվարություններ շատ են եղել, սակայն գիտակցում էինք, որ մեզանից յուրաքանչյուրը շատ անելիքներ ունի հասարակական կյանքում առանձնահատուկ կարիքներով երեխաների ներգրավման գործում»:

«Այս երեխաները ոչ թե սահմանափակ, այլ անսահմանափակ հնարավորություններ ունեն: Նրանք, կանգնելով նույն բեմում մյուսների կողքին, կկոտրեն հասարակության մեջ հատուկ խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ եղած կարծրատիպերը», ասաց հատուկ կրթության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար **Արմինե Ավագյանը**:

Մասնակիցներից **Էդիկ Հայրապետյանը** ժեստերի լեզվով հանդիսատեսին փոխանցեց համերգից ստացած իր տպավորությունները. «Շատ ոգեւորված եմ, զարմացած եմ այսչափ ջերմության համար: Անասելի զգացողություն ունեցա, երբ հանդիսատեսը մեզ ծափահարեց հոտնկայս: Ես հասկացա, որ մարդիկ մեզ սիրում են եւ մենք էլ ապագա ունենք»:

Միջոցառման ավարտին բոլոր մասնակիցներին հանձնվեցին պատվոգրեր, իսկ աղջիկներին՝ նաեւ ծաղիկներ: Հանդիսատեսը հնարավորություն ունեցավ տեսնելու եւ գնահատելու նաեւ մասնակիցների ձեռագործ աշխատանքները:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

# Նիկողոս Սարաֆեանի «Վենսէնի անտառը»՝ անգլերէն

Միչիկընի համալսարան-Տիրպոռնի Հայագիտութական ուսումնասիրութեանց կեդրոնը հրճուանքով կը ծանուցէ սփիւռքահայ գեղարուեստական արձակի լաւագոյն նմոյշներէն, Նիկողոս Սարաֆեանի «Վենսէնի անտառը» երկին անգլերէն թարգմանութեան («The Bois de Vincennes») հրատարակութիւնը: Սփիւռքահայ գրականութեան ամենայարգուած ներկայացուցիչներէն Սարաֆեանի 1947-ին առաջին անգամ հայերէնով հրատարակուած այս գործին անգլերէն թարգմանիչն է Քրիսթոֆըր Ադամեանը: Թարգմանութեան կցուած է նաեւ Սարաֆեանի մտաւոր աշխարհը քննարկող պրոֆ. Մարկ Նշանեանի ներածականը:





«Վենսէնի անտառը» երկով ընթերցողը կը ծանօթանայ Հայոց ցեղասպանութեան պատճառած աքսորին հետեւանքները ֆրանսահայ ականաւոր գրողներէն մէկուն վրայ: Սարաֆեան, որ Փարիզ բնակած է 1923-էն մինչեւ իր մահը՝ 1972-ին, ֆրանսահայ գրողներու «Մենք» խմբակին անդամ էր: Վերջիններս իրենց նոյնանուն պարբերականով եւ առանձին հրատարակուած գեղարուեստական այլ գործերով փորձեցին հայ ինքնութիւնը վերակերտել եւ վերասահմանել սփիւռքեան նոր պայմաններուն մէջ: Միաժամանակ, այս երկը հեղինակին համար իր սեփական, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի հաւաքական աքսորը իմաստաւորելու փորձ մըն էր: Վերջապէս, երկը Վենսէնի պուրակին մէջ եւ անոր մասին երկար խորհրդածութիւններու արգասիք է: Այս անտառին մէջ է, որ հեղինակը երկար ժամանակ կանցընէր՝ խոկալով միայնակ:

Քրիսթոֆըր Ադամեան՝ հատորին թարգմանիչը, Նիւ Եորք կը բնակի եւ հանրածանօթ է նաեւ որպէս գրող եւ ֆիլմարտադրիչ: «Վենսէնի անտառը» առանձին հատորով լոյս տեսած իր առաջին թարգմանական գործն է:

Թարգմանութեան հրատարակութիւնը իրականացաւ Աճեմեան հիմնադրամի տրամադրած առատաձեռն դրամաշնորհի մը աջակցութեամբ՝ ի յիշատակ հանգուցեալ Ռոպերտ Աճեմեանի: Աճեմեան հիմնադրամը կը գործէ Միչիկընի մէջ եւ կ՛օժանդակէ ամերիկահայ մշակութային կեանքի բարգաւաճման սատարող ձեռնարկներու:

Նորընծայ հատորին (ISBN 978-1934548-02-8 or 1-934548-02-2) ցրուիչն է Ուէյն Սթէյթ համալսարանի հրատարակչութիւնը: Զայն կարելի ձեռք բերել նաեւ առցանց պատուիրելով «Ամազոն»-ի կամ «Պառնզ էնտ Նոպըլ»-ի նմ ան գրավաճառներէ:

# Նոր հրատարակություն. Մայր Մաշտոց

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ լույս է ընծայել «Մայր Մաշտոց. Ժ դար» գիրքը՝ աշխատասիրությամբ Գեւորգ Տեր-Վարդանյանի:

Գիրքը պարունակում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցում գործածված հնավանդ ծիսարանի՝ Մաշտոցի բնագիրը՝ ըստ երկաթագիր հնագույն ձեռագրերի եւ համեմատությամբ Սուրբ Գրքի եւ ձեռագրական օժանդակ հարուստ նյութի: Գիրքն ունի բնագրական եւ կանոնացանկային հավելվածներ՝ Քահանայաթաղի կանոնի լրացուցիչ երկու խմբագրություն, Մեռնօրհնեքի կանոնի հին տարբերակը, «Կարգաւորութիւն օրհնութենաբեր ցուցակի» ցանկի համադիր բնագիրը, Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի վարքի խմբագրությունները, աղոթքարողների եւ սուրբգրային ընթերցվածների ցանկեր, հայկական ծիսարանի զարգացման ընթացքը պատկերող կանոնացանկային հավելվածներ:

Գիրքը նախատեսված է թե՛ ծիսագիտական, թե՛ ծիսակարգային եւ թե՛ հայերեն Աստվածաշնչի բնագրագիտական հետազոտությունների նպաստելու համար:

Գիրքը տպագրվում է Մայր աթոռի բարերար Գաբրիել Չեմպերճյանի մեկենասությամբ:

ՑՈՒՑԱՍՐԱՀ

# Երվանդ Քոչարի թանգարանը ներկայանում է նոր ծրագրերով

Ինչպես մեր հանրապետության բոլոր թանգարանները, այնպես էլ Երվանդ Քոչարի թանգարանը հայ գրատպության 500-ամյակի առիթով անցկացնում է ձեռնարկների շարք:



Գիրքը՝ որպես հոգեւոր լույսի խորհրդանիշ, նշանակալի տեղ ունի Քոչարի ստեղծագործություններում եւ թանգարանը առաջարկում է «Քոչարի «Libro» համաստեղությունը» խորագիրը կրող միջոցառումների շարք:

«**Ազգը**» Երվանդ Քոչարի թանգարանի տնօրեն **Լալա Քոչարից** տեղեկացավ, որ միջոցառումները կլինեն ողջ տարվա ընթացքում եւ դրանք իրարից կտարբերվեն ե՛ւ բնույթով, ե՛ւ ցուցադրությամբ: Անդրանիկ միջոցառման խորագիրն է «Գրականության մեծերը Քոչարի արվեստում», որի ընթացքում կլինի ցուցահանդես եւ վիրտուալ ցուցադրություն, ուր տեղ են գտել Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրիչ Ոսկան վարդապետ Երեւանցուն, Մեսրոպ Մաշտոցին, հայ եւ համաշխարհային գրականության մեծերին՝ Սայաթ-Նովային, Ավ. Իսահակյանին, Հովհ. Թումանյանին, Ե. Չարենցին, Դ. Դեմիրճյանին, Վ. Շեքսպիրին, Վ. Թերյանին, Ալ. Պուշկինին, Շ. Ռուսթավելուն, Ալ. Գրիբոյեդովին եւ այլոց նվիրված գեղանկարները, գրաֆիկաները, քանդակները:

Ուշագրավ է նաեւ «Հայ դյուցազնավեպի քնարյան պատումը» ցուցահանդեսի եւ տեսաֆիլմի ցուցադրությունը: Առաջին անգամ ցուցահանդեսը կազմակերպվում է նոր ձեւաչափով. հայ գրքային գրաֆիկայի բարձրակետ համարվող Քոչարյան նկարազարդումները Fine Art վերատպություններով ուղեկցվելու են մեկնաբանող տեսաֆիլմով:

Հաջորդ ձեռնարկը՝ «Գիրք իմացության եւ հիշողության» ցուցահանդեսն է, որին կներկայացվեն հետաքրքրական նմուշներ Քոչարի անձնական գրադարանից եւ նաեւ առանձին տեսաշարի ձեւով կներկայացվեն այն ստեղծագործությունները, որտեղ գիրքն ունի իմաստային խորհուրդ:

«Վերածնված խորհրդանիշ» տեսաֆիլմը կպատմի «Էրեբունի-Երեւան» տարածանկարի մեծացված տարբերակի պատմությունը: Նշենք, որ այդ տարածանկարը Քոչարը ստեղծել է 1968 թ. Երեւանի հիմնադրման 2750-ամյակի կապակցությամբ: Քոչարը՝ տարածանկարի մի նիստի վրա պատկերելով պահապան հրեշտակին՝ գիրքը գլխից վեր՝ երկնային լուսատուներին հավասար՝ ընդգծում է այն նշանակությունը, որ հայ ժողովուրդը տածել է գրի ու գրականության, մշակույթի ու գիտության հանդեպ, ակնարկելով, որ այսօրինակ պաշտամունքի մեջ է մեր հարատեւության գաղտնիքը: Քոչարը հրեշտակի պատկերն ասես դուրս է բերել հին հայկական մանրանկարներից, գունային առումով անգամ պահպանելով մեր ծաղկողների ավանդույթները, նշում էր թանգարանի տնօրեն Լալա Քոչարը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ցուցահանդես Բեյրութի «Շահին» պատկերասրահում

Փետրվարի 2-29-ը Բեյրութի «Շահին» պատկերասրահում (Galerie Shahine) ի հարգանս լիբանանահայ նկարիչ Հարություն Թորոսյանի, կազմակերպվել է նրա աշխատանքների ցուցահանդես: Այն ունեցել է մասնակիցների հետաքրքրական կազմ, բացի Հ. Թորոսյանից ցուցահանդեսում ընդգրկված են եղել նկարչի ընտանիքի անդամների՝ կնոջ եւ որդու, ինչպես նաեւ ազգությամբ հայ եւ արաբ իր աշակերտների գեղանկարչական աշխատանքներից:



Հարություն Թորոսյան

Լիբանանահայ կերպարվեստի միջավայրում Հ. Թորոսյանը նշանակալի դերակատարում ունի ոչ միայն որպես նկարիչ, նաեւ արվեստի տեսաբան եւ հասկացես մանկավարժ:

Մասնագիտական կրթությունը ստացել է Բեյրութում, ապա սովորել Փարիզի վարպետների սալոններում: Տասնամյակներ նա դասավանդում է Բեյրութի Գեղարվեստի բարձրագույն դպրոցում: Իր ընտանիքն էլ ստեղծագործական նույն մթնոլորտում է: Նկարիչներ են կինը՝ Կիման եւ որդին՝ Ստեփանը: Էությամբ ու նկարագրով արվեստի, մշակույթի մարդ է Հարություն Թորոսյանը, կյանքը արտիստիկ ներշնչանքով ու հեւքով ապրող: Ինչպես հրավիրատոմսում բուկլետում է ներկայացված, նա արեւելքը եւ արեւմուտքը միացնող արվեստագետ է, Լիբանանի սիրահար, որ այդ երկրին հաղորդել է նաեւ Հայաստանի բույրը եւ գույնը: Ֆրանսահայ հայտնի նկարիչ, ծնունդով նույնպես Բեյրութից Ասատուրը (Պզտիկյան) Հարություն Թորոսյանին կոչել է նկարչության Վիվալդի: Իսկ լիբանանցի արվեստաբանը գրում է, որ նա անկասկած իրենց երկրի մեծ նկարիչներից է:

Հարություն Թորոսյանը անհատական եւ խմբակային բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել Լիբանանում, Ֆրանսիայում, Միացյալ Նահանգներում եւ Հայաստանում: Շուրջ 50 միջազգային ցուցահանդեսներում Լիբանանի գեղանկարչությունը ներկայացվել է ի դեմս Հ. Թորոսյանի: Նրա աշխատանքները գտնվում են տարբեր թանգարաններում եւ անձնական հավաքածուներում, անդամ է Լիբանանի նկարիչների ասոցիացիայի, Ֆրանսիայի արվեստագետների տան:

Բեյրութի այս վերջին ցուցահանդեսում նկարների մի զգալի մաս Գեղարվեստի դպրոցի իր սաների աշխատանքներն են, որոնցից շատերը այժմ ստեղծագործում են օտար երկրներում:

Ս. Բ.

# Լեւոն Ջուլֆալակյան. «Մեդալներ ավելի շատ կնվաճեինք, եթե չլիներ խայտառակ մրցավարությունը»

Օրերս Բելգրադում ավարտված ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի ըմբիշները 4 մեդալ նվաճեցին: Դրանցից 3-ը բաժին հասավ հունահռոմեական ոճի ըմբիշներին: Երեկ մամուլի «Պոստ Սկրիպտում» ակումբում լրագրողներին հանդիպեցին հունահռոմեական ըմբշամարտի Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը, ըմբիշներ, Եվրոպայի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը (96 կգ), բրոնզե մրցանակակիրներ Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ) եւ գերծանրքաշային Յուրի Պատրիկեեւը:




Հավաքականի գլխավոր մարզիչ **Լեւոն Ջուլֆալակյանն** ընդհանուր առմամբ գոհ էր մեր ըմբիշների ելույթից: Քաշային 7 կարգերում հանդես եկած մեր ըմբիշներից 3-ը դարձան մրցանակակիրներ: Թիմային հաշվարկով Հայաստանի հավաքականը 41 երկրների մեջ 27 միավորով զբաղեցրեց 5-րդ տեղը՝ առաջ թողնելով Ռուսաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի եւ Բուլղարիայի ընտրանիներին:

Ջուլֆալակյանը նշեց, որ մեդալների թիվն ավելին կլիներ, եթե Ռոման Ամոյանը ադրբեջանցի ըմբիշի հետ գոտեմարտում կողմնակալ մրցավարության զոհ չդառնար: «Այդ գոտեմարտը շատ տհաճ երեւույթ էր առաջնությունում: Ադրբեջանցի ըմբիշն արգելված ձեւով էր գոտեմարտում եւ այն նման էր փողոցային կռվի: Հաշվի առնելով մեր ըմբիշի ակտիվությունը եւ կիրառած հնարքները, հաղթանակը պետք է շնորհեին Ամոյանին: Սակայն ի զարմանս բոլորի, հաղթանակը շնորհվեց ադրբեջանցուն: Գոտեմարտի ավարտից 3 վրկ առաջ ադրբեջանցու մարզիչը բողոքեց ու մրցավարը միավորը շնորհեց նրա սանին: Իսկ ինձ գորգի մրցավարը չթույլատրեց բողոք ներկայացնել՝ ցույց տալով դեղին քարտ: Ռոմանը շատ էր վրդովվել այդ անարդարությունից ու սկզբում չէր ցանկանում մոտենալ մրցավարին: Մի քանի վրկ անց նա մոտեցավ ու մրցավարը բարձրացրեց մրցակցի ձեռքը: Հաջորդ գոտեմարտերում էլ ադրբեջանցին հաղթեց մրցավարների շնորհիվ ու Եվրոպայի չեմպիոն հռչակվեց:

ՖԻԼԱ-ի նախագահ Ռաֆայել Մարտինետին պատժեց մրցավարներին, միաժամանակ որակազրկեց Ռոման Ամոյանին, որը զրկվեց բրոնզե մեդալի համար պայքարը շարունակելու իրավունքից: Շուտով ՖԻԼԱ-ի նիստում քննարկվելու է մրցավարության հարցը: Եթե Ռոման Ամոյանին չթույլատրեն մասնակցելու օլիմպիական վարկանիշային մրցաշարերին, ապա մեր ֆեդերացիան, ՀԱՕԿ-ը համապատասխան միջոցներ կձեռնարկեն դա թույլ չտալու համար», եզրափակեց Լեւոն Ջուլֆալակյանը:

Մրցաշարի մասին իրենց տպավորությունները կիսեցին նաեւ առաջնության մրցանակակիրները:

**Արթուր Ալեքսանյան** - Թիմը լավ հանդես եկավ: Իհարկե, լավ կլիներ, որ ավելի շատ մեդալներ նվաճեինք: Ուրախ եմ, որ հաղթեցի Եվրոպայի առաջնությունում: Կաշխատեմ նաեւ օլիմպիական ուղեգիր նվաճել:

**Արսեն Ջուլֆալակյան** - Նախ շնորհակալություն եմ հայտնում այն լրագրողներին, որոնք լուսաբանեցին մեր ելույթները: Մրցումները իրոք աննախադեպ էին մրցավարական սխալների առումով: Թիմը շատ լավ հանդես եկավ: Նորեկներն էլ իրենց լավ դրսեւորեցին: Շատ բարդ առաջնություն էր, մասնակիցների գրեթե 80 տոկոսը բարձրակարգ ըմբիշներ էին: Շնորհավորում եմ Արթուրին Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար: Ես վատ մարզավիճակում չէի, ռուս ըմբիշի հետ գոտեմարտն էլ հավասար պայքարում անցավ: Հոգնածության եւ մի փոքր էլ դանդաղկոտության պատճառով գոտեմարտի վերջում չկարողացա միավոր վաստակել ու պարտվեցի: Իսկ մնացած գոտեմարտերը կարծում եմ լավ անցկացրի: Պատրաստ էի պայքարելու ոսկե մեդալի համար, սակայն որոշ վրիպումների պատճառով չստացվեց:

**Յուրի Պատրիկեեւ** - Ես նույնպես կարծում եմ, որ թիմը լավ հանդես եկավ: Բայց մրցավարությունը խայտառակություն էր, այդպիսի սխալներ վերջին 10 տարում չէի տեսել: Դժվար է ասել, թե օլիմպիական խաղերում մրցավարությունն ինչպիսին կլինի:

Անդրադառնալով առաջիկա վարկանիշային 3 մրցաշարերին, Լեւոն Ջուլֆալակյանը նշեց, որ դեռեւս չի որոշել, թե յուրաքանչյուրին ինչպիսի կազմով են մասնակցելու: Ամեն դեպքում, հավանաբար առաջին մրցաշարին ուժեղ կազմով կմասնակցեն, որպեսզի հետագայում անելիքները ավելի կոնկրետ լինեն: Հավաքականի գլխավոր մարզիչը շնորհակալություն հայտնեց ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ Սամվել Կարապետյանին եւ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին ըմբիշներին ամեն կերպ աջակցելու համար:

# Դանիելյանն աշխարհի առաջնության ուղեգիր նվաճեց

**Թուրքիայի Գազիանթեփ քաղաքում ավարտվեց շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնությունը: Հայ շախմատիստուհիներից առավել հաջող ելույթ ունեցավ Էլինա Դանիելյանը, որը 11 հնարավորից վաստակած 7,5 միավորով լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով գրավեց 8-րդ տեղը եւ իրավունք ստացավ մասնակցելու աշխարհի առաջնությանը: Մրցաշարի ավարտից 2 տուր առաջ Էլինան հավակնում էր մեդալի, սակայն մրցանակակիր դառնալ չհաջողվեց: 10-րդ տուրում նա սեւերով հաղթեց վրացի Սալոմե Մելիային, իսկ վերջին տուրում արդեն 11-րդ քայլին հաշտություն կնքեց ֆրանսիացի Մարի Սեբագի հետ:**



**Լիլիթ Մկրտչյանը եւ Հայաստանի այս տարվա չեմպիոնուհի Մարիա Կուրսովան վաստակեցին 6-ական միավոր ու զբաղեցրին համապատասխանաբար 35-րդ եւ 38-րդ տեղերը: Լիլիթը 10-րդ տուրում հաղթեց Զոյա Շլեյնինգին, իսկ ավարտական մրցախաղում պարտվեց Բահիրա Կովանովային: Կուրսովան ընդամենը կես միավոր վաստակեց՝ հաշտություն կնքելով Նատալյա Ժուկովայի հետ, պարտվելով Սալոմե Մելիային:**

**5,5 միավորով 55-րդ հորիզոնականը զբաղեցրեց Լիլիթ Գալոյանը: Նա հաշտություն կնքեց Թուրքան Մամեդյարովայի եւ Մարինա Մակրոպուլոյի հետ: Աննա Հայրապետյանը 5 միավորով գրավեց 71-րդ տեղը: Ֆրանսիան ներկայացնող Էլմիրա Սկրիպչենկոն 5,5 միավորով գրավեց 47-րդ տեղը, իսկ ռուսաստանցի Նելլի Ալեքսանյանը 4,5 միավորով 76-րդ հորիզոնականը զբաղեցրեց:**

ՖՈՒՏԲՈԼ

# Առաջնությունը կանցկացվի 6 շրջանով

**ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի հրամանով հաստատվել են 2012/13-ի ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն եւ առաջին խմբերի խաղացանկերը, առաջնության կանոնակարգը:**

**Ինչպես հայտնի է, 2013-ից Հայաստանն անցնելու է առաջնության անցկացման աշուն-գարուն մրցակարգին: Ուստի ՀՀ 21-րդ առաջնությունը կտեւի մոտ 1,5 տարի եւ կանցկացվի 6 շրջանով: Բարձրագույն խմբի առաջնության մեկնարկը կտրվի մարտի 24-ին: Այդ օրը «Բանանցը» կհյուրընկալի «Իմպուլսին» սեփական մարզադաշտում, իսկ Կապանում «Գանձասարը» կմրցի «Արարատի» հետ: Հաջորդ օրը կկայանան «Փյունիկ»-«Ուլիս», «Շիրակ»-«Միկա» հանդիպումները:**

**2012-ին թիմերը կանցկացնեն 32-ական խաղ: 32-րդ տուրի հանդիպումները նախատեսված են դեկտեմբերի 1-2-ին: Հաջորդ տարի առաջնությունը կվերսկսվի մարտի 9-ին: Ավարտական՝ 42-րդ տուրը կկայանա մայիսի 18-ին:**

**Քանի որ «Հրազդան» մարզադաշտում վերանորոգման աշխատանքներ են իրականացվելու, ուստի երկրի չեմպիոն «Ուլիսը» մրցակիցներին հյուրընկալելու է «Հանրապետական» մարզադաշտում, իսկ «Արարատը» որպես սեփական դաշտ է ընտրել Աբովյանի քաղաքային մարզադաշտը: Դիլիջանի «Իմպուլսը» նախընտրել է Արարատի «Այգ» մարզաբազայի խաղադաշտը: Մինչեւ Գյումրիում մարզադաշտի վերանորոգման աշխատանքների ավարտը «Շիրակը» մրցակիցներին կհյուրընկալի Իջեւանի «Առնար» մարզադաշտում: «Փյունիկը» նախկինի պես կխաղա «Հանրապետական» մարզադաշտում, իսկ «Միկան», «Գանձասարն» ու «Բանանցը» մրցակիցներին կհյուրընկալեն սեփական մարզադաշտում:**

**Առաջնության արդյունքներով բարձրագույն խմբում վերջին տեղը զբաղեցրած թիմը հաջորդ տարի իր տեղը կզիջի առաջին խմբի հաղթողին: Առաջին խմբի առաջնությունը կանցկացվի 4 շրջանով 10 թիմերի մասնակցությամբ: Բարձրագույն խմբի ուղեգրի համար կարող են պայքարել միայն նորաստեղծ «Քինգ Դելյուքսը» եւ «Ալաշկերտը»:**

# Ռոբերտ Աղասարյանը միանձնյա առաջատարն է

**Երեւանում անցկացվող շախմատի «Գառնի-2012» մրցաշարի 5-րդ տուրից հետո 4 միավորով միանձնյա առաջատար դարձավ Ռոբերտ Աղասարյանը, որը հաղթեց Պավել Դրուգովին: Իսկ ահա Դինարա Սադվակասովան առաջին պարտությունը կրեց եւ 3 միավորով նահանջեց 4-րդ հորիզոնական: Նրա մրցակիցը Մաքսիմ Չիգաեւն էր, որը 3,5 միավորով տեղափոխվեց 2-րդ հորիզոնական:**

**Առաջին հաղթանակը տոնեց Տիգրան Հարությունյանը՝ պարտության մատնելով Պոուա Մարիին: Ոչ-ոքի ավարտվեցին Դավիթ Քալաշյան-Ռաֆայել Բակունց, Ահմադ Ասգարիզադեհ-Արման Հայրապետյան պարտիաները:**

# Նալբանդյանի հաղթարշավը շարունակվեց

**Ինդիան Ուելսի թենիսի մրցաշարում հաղթարշավը շարունակեց Դավիթ Նալբանդյանը, որը 3-րդ փուլում պարտության մատնեց սերբ Յանկո Տիպսարեւիչին (6-3, 3-6, 6-3): Հաջորդ փուլում Նալբանդյանը կմրցի ֆրանսիացի Տսոնգայի հետ, որը պարտության էր մատնել չեխ Շտեպանեկին (6-7, 6-3, 6-2):**

# Ռիոյում նժույգավար ունենալու նպատակով

**Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության բաժնից, ՀԱՕԿ-ը ձիասպորտի հանրապետական ֆեդերացիայի հետ համատեղ ծրագիր է մշակել 2016-ին Ռիո Դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիական խաղերում Հայաստանի պատվիրակության կազմում նժույգավար ունենալու համար: Նպատակն իրականացնելու առաջին քայլը ՄՕԿ-ի «Օլիմպիական համերաշխության» ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի՝ Երեւանում կազմակերպած մարզչական-տեխնիկական դասընթացն էր: Հայ մասնագետներից բացի, դասընթացն ունկնդրեցին նաեւ Վրաստանի եւ Ղազախստանի մարզիչները: Տեսագործնական պարապմունքը ղեկավարեց հույն հեղինակավոր մասնագետ Ստավրոս Գեորգոպուլոսը:**

**Հ. Հայրապետյանի անվան ձիասպորտի կենտրոնը ապահովված է անհրաժեշտ բոլոր պայմաններով եւ մասնակիցները լիովին գոհ մնացին երեւանյան միջոցառումից: Կարեւոր էր, որ միասին էին հավաքվել ձիասպորտի միանգամից չորս երկրի դպրոցների ներկայացուցիչները: Նրանք իրարից շատ բան սովորեցին եւ բավարարեցին աթենքցի ղեկավարի պահանջները: Այդ մասին են վկայում մասնակիցներին նշանակված բարձր գնահատականները եւ շնորհված ՄՕԿ-ի հավաստագրերը:**

# «Բավարիան» ռեկորդ սահմանեց

**Հայտնի դարձան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի եւս 2 մասնակիցները: Մյունխենի «Բավարիան» չեմպիոնների լիգայի մրցաշարում արդյունավետության նոր ռեկորդ սահմանեց՝ 7-0 հաշվով ջախջախելով շվեյցարական «Բազելին»: Թիմի հարձակվող Մարիո Գոմեսն էլ քիչ էր մնացել կրկներ Լիոնել Մեսիի ռեկորդը, որը 5 անգամ գրավել էր «Բայերի» դարպասը: Սակայն Գոմեսը բավարարվեց 4 գնդակով: Հիշեցնենք, որ Շվեյցարիայում «Բավարիան» պարտվել էր 0-1 հաշվով:**

**Պայքարից դուրս մնաց Միլանի «Ինտերը», որը թեեւ պատասխան խաղում սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց «Մարսելին», սակայն ուղեգիրը նվաճեց ֆրանսիական ակումբը, որն առաջին խաղում մրցակցին պարտության էր մատնել 1-0 հաշվով: Ընդ որում «Մարսելը» հաշվի հավասարակշռությունը վերականգնել էր ավելացված ժամանակի 2-րդ րոպեին, սակայն 4 րոպե անց Պացինին 11 մ հարվածով հաղթանակ պարգեւեց «Ինտերին»:**

# Նվազագույն հաշվով

**Անթալիայում ուսումնամարզական հավաքի մեջ գտնվող Կապանի «Գանձասարը» մրցեց Թուրքմենստանի չեմպիոն «Նեբիտչիի» հետ, որը վերջերս վերանվանվել է «Բալկանի»: Հորդ անձրեւի ուղեկցությամբ անցած խաղն ավարտվեց մրցակցի 1-0 հաշվով հաղթանակով:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Երբ վերադասն ու օգնականը ծեծում են աշխատակցուհուն

«**Ազգը**» տարիներ շարունակ հրապարակումներով անդրադարձել է աշխատավայրում կանանց նկատմամբ դրսեւորվող բռնարարքներին: Եվ ահա դրանց թվում է նաեւ ղեկավարի կողմից աշխատողին նվաստացնելու, վիրավորելու եւ բռնություն գործադրելու երեւույթը: Մեզանում նման դեպքերի մասին գրեթե չեն խոսում, այլ գերադասում են «թքել ու հեռանալ», պնդում են նման իրավիճակներում հայտնված կանայք:

Եվ ահա, ՀՀ գլխավոր դատախազին ուղղված իր բողոքում 54-ամյա Աիդա Հովհաննիսյանը գրել է. «Հրաչյա Այվազյանի եւ Աշոտ Խաչատրյանի կողմից ինձ պատճառված մարմնական վնասվածքները եղել են դիտավորյալ եւ բռնի, տեւել են բավականին երկար ժամանակ: Այս ամենի հետեւանքով ես որպես կին ունեցել եմ եւ ունեմ շատ ծանր հոգեկան տառապանքներ, քանի որ վերադասը հենց աշխատանքի վայրում առանց որեւէ պատճառի ինձ նվաստացրել է, մարմնական եւ հոգեկան ուժեղ ցավ պատճառել...»:

«**Ազգը**» փորձեց հեռախոսով զրուցել տուժող Աիդա Հովհաննիսյանի հետ, սակայն պարզվեց, որ նա ի վիճակի չէ որեւէ մեկի հետ զրուցել ու դեռ սթրեսային վիճակում է: Ի վերջո պարզեցինք, որ կիրթ ու բարեհես կինը, որ բնապահպանության նախարարությունում աշխատում է որպես տեսուչ եւ իր գործին հրաշալի է տիրապետում, հունվարի 10-ին նախարարության բաժնի պետ Հրաչյա Այվազյանի մոտ է կանչվել, եւ աշխատասենյակում բաժնի պետն իր անհամաձայնությունն է հայտնել Աիդայի կողմից ներկայացված աշխատանքին տրված «Կառավարչական հմտությունների տիրապետելու ցածր գնահատականին»: Այդ կապակցությամբ Աիդա Հովհաննիսյանն իր գրավոր առաջարկություններն է ներկայացրել, սակայն պետը պարտադրել է Աիդային ստորագրել այդ գնահատականների տակ այնպես, ինչպես ինքն է ներկայացրել, առանց ընդդիմանալու եւ բողոքելու: «Իմ օրինական իրավունքի իրականացման ցանկությունը լսելով, միանգամից Հրաչյա Այվազյանը վեր կացավ,- գրում է Աիդան,- եւ անսպասելի հարձակվեց ինձ վրա: Նա բռնել էր ձեռքերս, ամբողջ ուժով սեղմում էր եւ չէր թողնում, քաշքշում էր եւ միաժամանակ իմ հասցեին հայհոյանքներ էր տալիս, չնայած իմ խնդրանքներին. «Տղա ջան, ի՞նչ եք անում, խնդրում եմ ինձ բաց թողեք, ես ինձ վատ եմ զգում»:

Սակայն տիկնոջ խոսքերը բանի տեղ չի դրել բաժնի պետը եւ դեռ ավելին՝ օգնության է կանչել իր տեղակալ Աշոտ Խաչատրյանին, ու երկուսով հարձակվել են անպաշտպան կնոջ վրա ու բռնի գործողություններ կատարել... Կինը մի կերպ կարողացել է դուրս պրծնել նրանց ճիրաններից ու դեպքի մասին տեղեկացրել աշխատակազմի ղեկավարին, այնուհետեւ՝ նախարարին: Վերջինս հաջորդ օրը խորհրդակցություն է հրավիրել, որի ընթացքում բաժնի պետն ու տեղակալը հայտարարել են, որ նման բան չի եղել: Չնայած դեպքից տուժած կինը ցույց է տվել թեւերի կապտուկները, բռի տղամարդիկ հեգնել են ու ծիծաղել: Նախարարը կնոջը հանձնարարել է դիմել ոստիկանություն: Կատարվածը այնքան է վիրավորել կնոջ արժանապատվությունը, որ նա հունվարի 14-ին հայտարարություն է ներկայացրել ոստիկանության կենտրոնական բաժին:

Բաժնի հետաքննիչ Ս. Աբովյանը կատարած քննության ընթացքում չի ժխտել տեղի ունեցածը, սակայն գտել է, որ բացակայում են ք. օր.-ի 118-րդ հոդվածի՝ ծեծի հատկանիշները, քանի որ «անզգուշությամբ ցավ պատճառելը քրեորեն պատժելի չէ»:

Աիդա Հովհաննիսյանը վրդովված է քրեական գործ հարուցելու մերժումից ու իր բողոքն է ներկայացնելու ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Տեսնենք, թե ինչ ընթացք կունենա այս մեկ միջադեպը, որը կարծես թե մեզանում դառնում է սովորական:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական հիմնադրամ**

**2011 թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Հիմնադրամի լրիվ անունը՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 264.160.05889 13.08.2002 թ., պետական գրանցման վկայական 03 Ա 055637:

3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, Այգեստան փ. 5, տ. 7, հեռ. (010) 559068

7. Իրականացված ծրագրերը՝ «Լույս հայի աչքերին» բարեգործական ծրագիր

(ա) կանխարգելում/ հետազոտություն/ բուժում/ վիրահատություն/ ակնոցների տրամադրում:

ՀԱՆ-ի գործունեության արդյունքում 2011 թ. ընթացքում ՀՀ Կոտայքի, Տավուշի, Լոռու, Շիրակի եւ Արագածոտնի մարզերում ակնային ընդհանուր հետազոտություն է անցել 21309 մարդ, դուրս է գրվել եւ բաժանվել 8416 ակնոց: ՀԱՆ-ի Աչքի շարժական հիվանդանոցում վիրահատվել է 1261 մարդ, 646-ը ստացել է լազերային բուժում: Դպրոցներում ակնաբույժների հասցեական հետազոտությունների արդյունքում ստուգվել է 2383 աշակերտ: Անհասության ռետինոպաթիայի նորածնային սքրինինգի եւ բուժման ծրագրի շրջանակներում ստուգվել է 427 նորածին, արվել է 18 լազերային վիրահատություն:

(բ) մասնագիտական վերապատրաստում/ դասընթացներ՝ վերապատրաստվել են 24 ընտանեկան բժիշկ եւ 17 ներզատաբան, անցկացվել է անհասության ռետինոպաթիայի կանխարգելման միջազգային համաժողով եւ դասընթացներ:

(գ) հանրային իրազեկություն/ տեղեկատվություն/ կրթություն՝ բնակչությանն են բաժանվել 6000-ից ավել կրթական բրոշյուրներ աչքի հիվանդությունների եւ աչքի խնամքի վերաբերյալ:

8. Ֆինանսավորման աղբյուրներն են հանդիսացել հետեւյալ նվիրատվությունները՝

* «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական ընկերություն, ԱՄՆ - 117 766 հազար դրամ
* Մեծ Բրիտանիայի դեսպանատուն (Ռոբերտ Բերնսի կոմիտե) - 1 850 հազար դրամ
* Մանես ԲՀ - 1 000 հազար դրամ
* Օրանժ հիմնադրամ - 9 414 հազար դրամ
* Բարեգործական համերգի հասույթ - 85 հազար դրամ

9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 444 416 հազար դրամ

10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 444 416 հազար դրամ

11. Կից ներկայացնում ենք «Բեյքեր-Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի իրականացրած աուդիտորական եզրակացությունը:

Հաստատված է
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի հոգաբարձուների
խորհրդի 2012 թ. մարտի 09-ի թիվ 02-2012 որոշմամբ

*Ղեկավար Նունե Եղիազարյան*
*Գլխավոր հաշվապահ Նաիրա Թարվերդյան*

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուներին**

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական հիմնադրամի 31 դեկտեմբերի 2011 թ. դրությամբ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական հիմնադրամի ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին (աուդիտի միջազգային ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների, պահանջվում է, որ մենք աուդիտը նախագծենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների եւ բացահայտումների բաղադրիչների հետազոտումը՝ թեստային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, Հիմնադրամի ղեկավարության կողմից իրականացվող կառավարման եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար եւ իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր կարծիքով, 2011 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են եւ տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին, իսկ հաշվապահական հաշվառումը Ընկերությունում վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Աուդիտոր Մ. Մկրտչյան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ACBA-CREDIT AGRICOLE BANK

Վաճառվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Աշոցք» մասնաճյուղին պատկանող ՎԱԶ-21213 մակնիշի, 2001թ. արտադրության մեքենա: Ցանկացողները կարող են դիմել «Աշոցք» մասնաճյուղ՝ Շիրակի մարզ, գ. Աշոցք 1/9 կամ զանգահարել (077) 77 00 18 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Սույն թվականի ապրիլի 16-ին, ժամը 10:00–ին ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի գյուղապետարանում տեղի կունենա «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Խաչաքար տեղամասում 31.16 կմ² մակերեսով տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85, www.geoteam.am www.mnp.am կայքերում:




## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանում բացվել է «Կաիսա» Շախմատի դպրոցը, որում դասավանդում են Հայաստանի հանրահայտ գրոսմայստերներ՝ Օլիմպիական չեմպիոն՝ Տիգրան Լ. Պետրոսյանը, Աշխարհի մինչեւ 20 տ. չեմպիոն Զավեն Անդրիասյանը, միակ հայ կին գրոսմայստեր Էլինա Դանիելյանը, ինչպես նաեւ Գեւորգ Հարությունյանը եւ Օլիմպիական չեմպիոն եւ մարզիչ Տիգրան Նալբանդյանը: Դպրոց ընդունվելու համար կարելի է զանգահարել 636513, 585094, 098-871967 հեռախոսահամարներով: Հասցե՝ Նորքի II Զանգված Մոլդովական 53:

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Եվրոթերմ» ՓԲԸ-ի կողմից, ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ համայնքի վարչական տարածքում՝ ոռոգման եւ արդյունաբերական նպատակներով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 74,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2012 թ. մարտի 21-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՁ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց ընդհանուր աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ) եւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը.

«Հայգազարդ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող՝

-ՀՀ ք. Երեւան, Կենտրոն համայնք, Իսահակյան փող., 24 շենք, թիվ 22 հասցեում գտնվող 188,1 ք.մ. ընդհանուր մակերեսով գրասենյակային տարածքը: Լոտի մեկնարկային գինը 88200000 ՀՀ դրամ: Լոտը իրենից ներկայացնում է 1940-ական թվականների շինություն, գտնվում է 9 հարկանի շենքի 1-ին հարկում: Լոտի նկատմամբ սահմանափակումներ չկան: Լոտի հատման գինը չի հրապարակվում:

-ՀՀ ք. Երեւան, Կենտրոն համայնք, Իսահակյան փող., 24 շենք, թիվ 23 հասցեում գտնվող 98,4 ք.մ. ընդհանուր մակերեսով գրասենյակային տարածքը: Լոտի մեկնարկային գինը 46200000 ՀՀ դրամ: Լոտը իրենից ներկայացնում է 1940-ական թվականների շինություն, գտնվում է 9 հարկանի շենքի 1-ին հարկում: Լոտի նկատմամբ սահմանափակումներ չկան: Լոտի հատման գինը չի հրապարակվում:

Աճուրդը ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1, 4-րդ հարկ հասցեում 02.04.2012 թ.-ին, ժ. 12:00-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետն է 29.03.2012թ., ժ. 12:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Լոտերը սակարկվելու են ըստ ներկայացված հերթականության:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 28.03.2012թ. ներառյալ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.3.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: